



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԹՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷԶԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

«ԱՒԳ ՇԱԲԱԹ, 9 ԱՊՐԻԼ 1911»

ԹԻԻ 12-13

ՏԱՀՄԱՐԻ ներկայ թիւը նուիրուած է Աւագ շաբթուան տօներուն եւ Կիլիկիոյ նահատակաց յիշատակին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԾԱՂԿԱԶԱՐԴ.— Յիսուսի արցունքը
Ովսաննա (քերթուած)
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ.— Ծոմ եւ պահք
ՄԵԾ ՍՈՒԳԻՆ ՏԱՐԵԳԱՐԶԸ.— Նահատակներու ազգը
Ամանոսի սարերէն (նահատակաց յիշատակին)
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.— «Հայ եկեղեցին ուղղափառութեան
տեսակէտով», Տ. Բօլիքարբոս Բսօմիատիսի
Սրտին ծարաւը (Ա)
Անկեղծութիւն եւ զարգացում (վերջին «ամագու-
մարին առթիւ»)
ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ.— Պէտք է հաղորդուիլ
ՄՈՌՅՈՒԱԾ ԷԶԵՐ.— Ունեւորայի առթիւ
Ծաղկազարդի մանուկ-քարը (Աւանդավէպ)
ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.— «Այսօր
կանգնեցաւ» եւ «Ո՛վ սքանչելի», Եւր. Նօթայով
եւ աշխ. Թարգմանութեամբ
ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ — (Դ.) Տիեզերքի ներդաշնակու-
թիւնը
Հոգիիս Հառաջանքը
Պսակն ահա՛ քեզ (քերթուած)
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ.— Կիլիկիոյ նահատակութեան
տարեդարձը, Կիլիկիոյ նորապսակ եպիսկոպոս-
ները, եւ շաբթուան ուրիշ լուրեր:

ԳԱԶՐԻԿ
ԼՈՒՍՆԹՍ
ԹԷՈԴԻԿ
Ա. Պ. ՇՄԵՆՆԵԱՆ
ՍՍԱԿԱՆ ՎԱՐԳԱՊԵՏ
ՅՐ. ՄԿՐՏԻԶԵԱՆ
ՉԷՈՐԳ Ծ. Վ. ՍՍԼԱՆՇԱՆ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՅԱԿՈԲ ՍՏԱՄԳՈՒԼԵԱՆ
ՎԱՀԱՆ Վ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ
ԼԷՈՆ ՏՆԻ
ԼՈՒՍՆԹԱԴ
Ս. ՏԷՐ ՅՐՎԱՆԵՒԵԱՆ

Սոյն թիւը զարդարուած է Կիլիկիոյ նահատակ եպիսկոպոսներուն պատկերներով:

Տպագր. Տ. ՏՕՂԱՄԱՐԱՃԵԱՆ
Մուշքան-Հանամ Մօշա-Բաշը, Թիւ 16
Կ. ՊՈԼԻՍ



“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պոստյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասանմանի համար	» 10 ֆրանք
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու:

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ’ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՐԱՄՍՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է զիմել առ Զարմայր Քանանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պէշիկթաշ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمی کلیسا سنده « داجار » غزتہ سی مدیری پاپاس زارماير افندی


Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթանեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Դարեղին Բհնյ. Պողար-
եան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան
ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարգէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան
ԵՕՋՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՋՆԿԱ. — Տ. Մեարոպ Բհնյ. Թորոսեան
ՋՄԻԻՌԻԱ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Գալուստ Բհնյ. Տ.
Գալուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաաւէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մարթոս էֆ. Թորոսեան
ԿԻՐՄԻԼԻՃԻԼԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՋՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պրպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Բէհեանեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլըմեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՌՈՒՍՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԱԽՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաչեան
ՍԵՔԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ. Օտապաչեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէզ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ. — Տ. Գէորգ Բհնյ. Թէրզեան
ՓԱՐԻՋ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմշա-
պուհ Բհնյ. Բիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐԾՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

«ԱՒԱԳ ՇԱԲԱԹ», 9 ԱՊՐԻԼ 1911

ԹԻԻ 12-13

ԽԱՂԿԱԶԱՐԴ

ՅԻՍՈՒՍԻ ԱՐՅՈՒՆՔԸ

«Տեսեալ զքաղաքն՝
եւաց ի վերայ նորա» :

Արեւելքի ժողովուրդներուն ամենէն քիչ յեղափոխական խմոր ունեցողը՝ Հրեայ ազգը, Յիսուսի ժամանակ, հռոմէական լուծիւտակ հազիւ կիսանկախ հպատակութեան, բայց ոչ երբեք գերութեան կեանք մը կը քաշկըռտէր։ Ասով հանդերձ իր ներքին ինքնօրինութեան մէջ ան ողբալի վիճակ մը կը ներկայացնէր, չունենալով գոնէ դէպ ի բարոյական եւ հոգեկան կատարելութեան մղում մը։ Կարծես անցեալի յիշատակները եւ ապագայի մեծիկան երազները կը բաւէին օրօրելու համար ամբողջ ազգ մը՝ իմաստակ դպիրներու եւ կեղծաւոր վարիսեցիներու շուքին մէջ։ Եւ այս օրանքը մասնաւորապէս կը շեշտուէր կրօնական մեծ տօներու, ծիսական խուռներամ արարողութիւններու յատկացուած հոգեւոր ջերմեռանդութեան տօթակէզ օրերուն։

Այդ օրերէն մէկն էր Հրեաներուն համար Բաղարշակերաց տօնը՝ որուն

երբեմն կը մասնակցէր Յիսուս ալ, իր քարոզութիւնները բերելով ու ներկայացնելով այդ տօնին երուսաղէմ համալսմբուած վայրաւատին Հրեաներուն։

Բայց այդ երբեմնակի երուսաղէմ վերելքները ու տաճարին շուրջ եւ սուրբ քաղաքին շրջակայքը տեղի ունեցած ուսուցումներն ու դէպքերը կարելի չէր բաղդատել ա՛յն ըլլալիքներուն հետ՝ որոնց թատր պիտի հանդիսանար երուսաղէմ, Զիթենեաց լեռնէն մինչեւ Կեդրոնի հեղեղատը, եւ անկէ մինչեւ Գողգոթա, միակ եօթնեակի մը միջոցին։

Այդ եօթնեակին առաջին օրուան առաւօտն էր։ Յիսուս հեծանելով մը եւ իրեններէն շքաւորուած՝ Բեթանիա, յէն ու Բեթբազէէն ելած էր Զիթենեաց լեռն կողէն վեր։ Գալիլեայի, Պէրէայի եւ Հրէաստանի քարոզութիւններէն ու հրաշագործութիւններէն խոնջ եւ վաստակաբեկ մարմինը կարծես բոլորովին թուլցած էր այդ վերելքի պահուն։ Սակայն երբ Զիթենեաց կատարը հասնելով կը տեսնէր իր դէմ տարածուած Հրէութեան կեդրոնը, բուն տաւալորութեան մը ներքեւ կը սթափէր եւ կը ջղայնանար։ Իր շուրջ ոչ նուազ ջղաճգօրէն

լարուած էին ուշադիր բայց անտեղեակ առաքեալներն ու աշակերտները: Իրեն դիմաւորութեան եկող ամբոխն ալ աւելի ջղուտ շարժուածներով եւ կոկորդալիր աղաղակներով, բարձրագոյն ուսանեալներով օգը կը թնդացնէր, ամենէն աւելի ջղային տագնապներ կ'անցընէր սակայն Յիսուսի հակառակորդ կուսակցութիւնը, որուն նոսրաները կրկնապատկուած էին մանաւանդ Ղազարոսի յարուածէնէն վերջ:

Այս ընդհանուր ջղայնութեան մէջ, դարձեալ Յիսուս առաջին անգամ կ'ուշաբերէր եւ կը հանդարտէր, ցօղելով արցունքի կայլակներ իր մօտաւոր տիւրեր ապագային, իրեններուն ցրծնքին, սա միամիտ ժողովուրդին ու նա խորամանկ դասակարգերուն վրայ:

Արդարեւ ինք հիմա կ'սպասուէր բարձունքին վրայ յաղթականի մուտք մը կ'ընէր. բայց հունս, մօտը չէր միթէ Տարսեան ժայռը: Յիսուսի համար ո՛րքան մօտ էր Զիթենեացը՝ Գողգոթային: Հաց տուած էր, դեղ գրած էր, յոյս եւ սիրտանք ներշնչած էր սա՝ «ուսանա» գոռացող ժողովուրդին, սակայն անգամ մը որ ուզէր խաղաղան ցոյց տալ, վայեր արձակել այդ միեւնոյն ժողովուրդին մէջ, «խաչեցի» չլիտի՛ պօռար այդ պահանջկոտ խաժամուժը:

Ամբոխին վժան ու բզզալը միշտ անտարբեր թողուցած էր Յիսուսը, եւ երուսաղէմ գալուն օրը չէր որ իր ուշադրութիւնը պիտի հրաւիրէր: Հասկա իր ակնարկը կ'երկարէր հիմա Անհոն, մօտը տարածուած քաղաքին վրայ՝ որուն մէջ Տաճարէն մինչեւ Անտոնեան աշտարակը եւ Քահանայապետներու ապարանքէն մինչեւ Պիղատոսի պալատը առաջակներու որջեր կազմուած էին, եւ իր դէմ դաւեր կը նիւթուէին: Այդ դաւերը թակարդներ չէին Յիսուսի. համար, անոնք Տաճարի գմբէթէն եւ Աշտարակի բարձրութենէն աւելի անդին եւ աւելի երկնա-

բերձ Գողգոթային պէս ցցուած մա. հառիթ խարակներ էին, որոնց տեսքը արցունք կը խլէր Յիսուսի աչքերէն: Հիմայ Դաւիթի քաղաքը եւ Սիօնի լեռը իրեն՝ «Որդւոյ Դաւիթի» համար միայն բռուած գերեզման մըն էր՝ մեռած խորտյէլի ոսկերոտիքով լեցուած, բիւրեղէ գաւաթ մըն էր՝ ասպականած ժողովուրդի մը պղծութիւններով զեղած:

Վայ իրեն՝ որ այս ողբալի կացութեան մէջ էր ինկած, ու իր փրկութեան հասած ըլլալն անգամ չէր իմացած: Ան Յիսուսի արցունքներուն արժանի չէր կրնար այլեւս հանդիսանալ:

Բայց մենք Քեզի չենք զլանար իբր պատուանդան մեր հոգիներն անգամ: Թո՛ղ Մովսէսի աթոռին վրայ նստին զպիւրնեղութեան փարիսեցիները, թող ասոնք ծանր ծանր լուծեր կապեն մեր վզին, կը բաւէ որ Դո՛ւն, ո՛վ Յիսուս, գոնէ անգամ մը զգացնես մեզի թէ արդարեւ յոյժ ողբալի է մեր հոգիներուն տեսքը:

Քիւր յաւիտեանական փառքիդ ճիթե. նազարդ բարձունքին վրայէն արտասուալից, հեկեկանքով ձայն տուր մեզի. «Արթնցի՛ր, արթնցի՛ր, թմրած հոգի՛ որ կիրքերու պատանդաւորումով եւ յարութիւններու սիւնաշարով ծածկուելէ վերջ՝ ամբարշտութիւնով գմբէթարդուած ես: Դուրս եկուր պահ մը այդ ամրափակ բանտերէդ: Գնա՛, իջիր ապաշխարութեան կայլակներով ողողուած՝ քսւ Գեթսեմանիդ եւ Տառապանքիդ խաչով բեւեռուելէ յետոյ մտի՛ր Յարութեանդ փառքին մէջ:»

Բայց ի՞նչ օգուտ, աւելորդ անգամ մըն ալ կը կրկնեմ թէ ձայն տուր մեզի. ամէն օր եւ ամէն տարի այս օրերուն յարչարանքի բովանդակ շքեղութիւններովդ կը յայտնուիս մեզի: Բայց մեր հոգիները երբեք չեն ճանչնար իրենց այցելութեան օրը: Անոնք կը նմանին հսօրեայ երուսաղէմին որ իր պարիսպներէն դուրս կը դղրդէր եւ ինք իր մէջ Քեզի համար դաւեր կը նիւթէր: Մեր հոգիներէն դուրս հազար «ովսանա»ներ Քեզի համար, ո՛վ Յիսուս, սակայն անոնցմէ ներս մի մտներ բնաւ, եթէ չես ուզեր անգամ մըն ալ խաչուիլ:

ԳԱԶՐԻԿ

ՈՂՍԱՆՆԱ՛...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱԿԵԱՐԿՆԵՐ

Արեալոյս է. բիւրեղ լոյսեր այգածին,
Անեռքեան անծայրածիր լուրք ծոցէն
Փրովքընալով վար կ'երկարին, որ օծեն
Սեգ լեռները, ուր եղնիկներ կ'արածին:
Ուր ցօղաքո՛ւրմ ծառեր, բուսիք ուս ուսի
Զարթօնքի այս խորագղեցի՛կ, սուրբ պա-
հուն
Պասկառանքի վեհ հոգիովն ակադան, հուն
Կ'ողջունեն, լո՛ւռ, գալուստն օրհնեալ Յի-
սուսին:

Երամ երամ, ժիր քրոջուններ միասին,
Միանըւա՛ք բարեկներու ճիւղին վրայ
Կը ճրճերա՛ն. «Մի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ,
Ովսանայ
«Մի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ, փառք, օրհնու քիւն
Յիսուսին»

Ժամին մեջ ալ մասդաւ սրղափ շար ի շար,
Թաւիւ օծի՛ք շապիկներով ճեփ—ճերմակ,
Խանդով զեզո՛ւն, զերթ լուսադեմ հրեւե-
սակ,

Զեռներնուն մեջ կանաչ ճիւղեր լուսավառ,
Կամ նորածիլ արմաւենւոյ քարմ ոսեր,
Կ'երգե՛ն զըւա՛րք «Օրհնեալ է Ան որ կուգայ,
Տերօջն անուամբ, օրհնեալ՝ յաւեռ ովսան-
նայ
«Օրհնեալ արեւն հեղ ու խորաւի, ան-
վեհեր»:

Կը ձայնակցի՛ն ծիրունիներ ալետր,
Սուրբ երկիւղով, պասկառանգով առլը-
ցուն,

Նոյն օրհներգներ, մեղեդիներ քրքրուա՛ն
Կը յանկերգեն միշտ անցադսուկ, խանդով
նոր:

* *

Ան ալ, Յիսու՛ս, Մաղկազարդի այս առ-
նուն,
Հեռ պարմանոյն, հեռ ծերունոյն՝ սրբ-
ագին

Դալար ոսեր կը տարածեմ Բու առջին
Իբր յայտարար նշան՝ սրբիս վառ սիրոյն:
Կը հաւատամ, կ'ընդունիս այս պատգամս
Դուն,

Մանուկներու երգերուն պէս քաղցրօր,
Ա՛խ, իցիւ քէ հուրիսս համակ սիրս
բոլոր,

Արեւամբումն ցընար մ'ըլլար քրքրուա՛ն..
Սեքսուսիս ԼՈՒՍՆԹԱԳ

ԾՈՍ ԵՒ ՊԱՂԲ

Հին դարերու ընթացքին, ամէն ազգ
և ամէն կրօնք ունեցած են իրենց ծոմերն
ու պահքերը: Պրահմանք, փիւնիկեցիք,
Ասորեստանցիք, Եբրայեցիք և այլն. իրենց
նուիրական ծոմապահութիւններն ունէին:
Հին Հրեաները յաճախ ծոմապահութեան
կը դիմէին՝ մանաւանդ ընդհանուր աղէտ-
ներու ատեն, նաև երբ ուզէին Աստուծոյ
հաճելի ըլլալ և ինքզինքնին խոնարհեցու-
նել Անոր առջև. իրենց ծոմերը կըսկսէին
մայրամուտէն մինչև յաջորդ մայրամուտ,
Ձէ ժամ անընդհատ: Ատոնցմէ գլխաւորն
է, — իբր տարեկան և ազգային ծոմապա-
հութիւն,— քառութեան մեծ օրը: Իս-
լամներն ալ ունին իրենց ամենախիստ ծո-
մապահութիւնն ի յիշատակ իրենց մեծ
Մարգարէին՝ Մուհամմէտի, Բամազան կոչ-
ուած ամսուն, 29 օր անընդմիջաբար, ա-
րեւին ծագումէն մինչև մայրը մտնելը ո-
չինչ ճաշակելով և ոչինչ ըմպելով:

Աստուածաշունչի մէջ է որ կը պատա-
հինք Մովսէսի, Եղիայի և Քրիստոսի քա-
ռանօրեայ ծոմերուն: Մատթէոսի աւե-
տարանին մէջ կայ սա հատուածը. «Երբոր
ծոմ պահես, գլուխդ օծէ և երեսդ լուա,
որպէս զի ծոմ պահողի պէս չերեւիս մար-
դերու»: Ղուկասու աւետարանն ալ ունի
յիշատակութիւն մը. «Կրնա՞ք հարսնիքին
տղոցը ծոմ պահել տալ, երբ փեսան հե-
տերնին է: Բայց օրեր պիտի գան ուր,
փեսան իրենցմէ հեռանալուն, ծոմ պիտի
պահեն անոնք»: Դարձեալ, Պողոս առաք-
եալի Կորնթացւոց թուղթը կը պարունա-
կէ սա խօսքը. «Մեր անձը՝ կ'ընծայենք
Աստուծոյ՝ սպասաւորներու պէս, շատ համ-
բերութեամբ վիշտերու, (և այլն), ծոմերու
մէջ»: Եւ գիտենք թէ առաքեալներէն շա-
տերուն կեանքը բոլորուած է զրկանքնե-
րով, տապալներով, անձնուրացութեամբ և
ծոմ-ծարաւ մնալով:

Ծոմ և պահք կրօնական հանգամանք
ունին, և կը կազմեն բարեպաշտներու հա-

ւատքին մէկ մասը: Ասոնք եկեղեցական պատուէրներ են իբր ողջպահիկ կանոններ: Այսպէս, Մեծ-Պահքը գարնանամուտին է որ կը պատահի, այսինքն անանկ ատեն մը ուր մարդուս ակործակը կը նուազի, արիւնը շարժման մէջ կ'ըլլայ և մարդ տեսակ մը վերանորոգում կը զգայ իր գործարանաւորութեան մէջ: Հարկ է ձմեռուան բեթմը փոխել, արիւնոտ միսեր չուտել, համեմներէ և գրգռիչ ըմպելիներէ հրաժարիլ, և կարելի եղածին չափ սնանիլ կանանչեղէններով, ճերմակ միսերով ու թեթեւ ուտելիքներով: Չուկն ալ անոնց կարգէն է: Այս պատճառներով է որ Եկեղեցին, — հետեւելով կրօնքներու մեծ մասին, — մեղէն ուտելիքներուն դէմ արգելքներ դրած է տարուան ինչ ինչ ժամանակներուն, իբր ժուժկալութիւն անձին և զգաստացում բարուց:

Հայերէն Մովսէսը կուգայ արարեալէն սալմ կամ սրեամբ բառէն որ «անսուղութիւն», կը նշանակէ: Մովսէս հոմանիշ ֆրանսերէն ժեօն (jeûne) ալ էմիւսնոյն բառն է դարձեալ, սերած լատիներէն jejunosէն որ «դատարկ», ըսել է, — ինչպէս կ'ըլլայ արդէն ստամոքս մը որ ատենի մը համար զրկուած է անունդէ:

Ժուժկալութեան այս օրէնքը կը կայանայ ուրեմն անունդներէ զրկումի մէջ, մարմինը տանջելու գիտումով: Պօսիւէ — ֆրանսացի սրբազան բեմբասացը — գրած է. «Անմեղ հոգին հրճուեցունող գերազոյն երանութեանց կը միանան ծովապահուութիւնք՝ պատճառով անորոշութեան, որպէս զի հոգին — միշտ անդունակ փորձութեանց և մեղքերու — րանայ ու սրբագործութիւն ապաշխարութեան մը»:

Դառնալով Պահքին և անոր յատուկ կերակուրներուն, ըսենք անմիջապէս թէ ամէն կազմի և խառնուածքի գործ չէ օրացոյցին նշանակած պահքի օրերը յարգել, հրաժարելով մսեղէններէ, կաթնեղէններէ և խղոտ կերակուրներէ: Ատոյգ է որ նախամարդիկ իբր անունդ չէին ձանչցած մսեղէնները, ու կը ձաշակէին միայն բուսեղէն և ընդեղէն կերակուրներ. բայց

դարերը փոխուած են, և դարերուն հետ մարդկային կազմն ալ հետզհետէ տկարացած, վատթարացած:

Ո՞վ չգիտեր թէ անպակ կերակուրներ կը թուլցունեն նեարդները, դնդերային դուրսեան պաշտօնականութիւնը կը դաւորեցունեն, որով բջիջային հիւսուածքը կ'առաւելու յոյժ:

Ամէն անոնք որ լծուած են մարմինը պարտաւեցանող ծանրածանր աշխատութեանց, (ինչպէս բանուորներ, մշակներ, պատերազմիկներ, նաւազներ, մերենապարներ և այլն), չեն կարող սնանիլ անիւղ և անմիս կերակուրներով: Արդէն, մի միայն բուսակերութիւնը խառնակութիւններ կը պատճառէ, արդիւնք՝ բուսական սնունդներուն տկար մարսականութեան: Բուսեղէնները նուազ հարուստ են աղօթի և փոսիորի պէս կազմիչ նիւթերով, քան թէ մսեղէնները:

Այս անպատեհութիւններէն կարելի է առաւելութիւններ ձեռք բերել, եթէ բուսեղէն սնունդներուն միացունենք կաթը, հաւկիթն ու կարագը, զորս արդէն կը թոյլատրէ բուսակերութիւնը թեւեւ, սակայն կ'արգիլէ քրիստոնեայ Եկեղեցին՝ պահքի օրերու: Անոնք որոնց կազմը չի ներեր պահք բռնել՝ իրենց բարեպաշտութեան մէջ արմատացած սովորաւորութեամբ մը եթէ յամառին պահքերնին բնաւ չլուծելու համար, չեմ կարծեր որ հաճելի բան մը ըրած կ'ըլլան Աստուծոյ. բռնիչները ինդացուցած կ'ըլլան միայն:

Կը մնայ խօսիլ քիչ մ'ալ Մեծ-Պահքը մասին, որ քառասնորդական Պահք ալ կը կոչուի և որուն հոմանիշ ունինք գրաբար Աղուհացքը: Բուն Բարեկենդանին յաջորդ երկուշարթիէն սկսեալ մինչեւ Զատիկին նուազատիքը 7 շաբաթ տեղ պահեցողութեան և ծովի ժամանակամիջոց մ'է ասիկա, զոր ունին քրիստոնեայք մեծամասնութեամբ, ի յիշատակ այն 40 օրուան զորս անցուց Յիսուս անապատին մէջ, առանց ուտելու և խմելու, երբ սատանային փորձութեան ենթարկուեցաւ:

Բո՛ւն Բարեկենդանին կիրակի գիշեր, որչափ ալ ուշ ըլլայ ատենը, գաւառացիք սովորութիւն ունին հաւկիթ ուտելու, ուտիքի կերակրոց իւր կնիք, Զատիկն արժանի ըլլալու համար կրկին հաւկիթ ճաշակելով՝ անով լուծելու իրենց պահքը: Երկուշաբթի երբ այգանայ, ռամիկ յորջորջմամբ կ'ըսուի Բախլախորան գոր երեք պէտք չէ «փակեալ խորան», ստուգաբանել, որովհետեւ նոյն օրէն չէ՝ որ Եկեղեցիներու խորանները կը վարագուրուին, այլ բարկենդանքին շաբաթ իրիկուընէ: «Բախլախորան»ը կուգայ պարսկերէն պաղի-խուր-սէն բարդ բառէն որ «բախլայ ուտել»ու օր կը նշանակէ, այսինքն մուտք դէպ ի ընդեղէն կերակուրներ:

Մեծ-Պահքի աւանդութեանց կարգէն է Մորմորոսը: Բառիս հոմանիշ ունի ռամ-կօրէն լեզուն՝ հարախօսնօլօզը: Վերջինս թուրքերէն բարդ բառ մըն է՝ կազմուած գարա (սեւ) և գօնօլօս (մարդագայլ) բառերէն, տեսակ մը գիշերայած պայիկ գայլակերպարան: Այդ մտացածին դելին համազօր ֆրանսացին ալ ունի իր loup-garouն որ երեւակայական կախարդ մըն է՝ դաշտերու և ճամբաներու մէջ դեգերող, պատրաստ մանուկներ լպպելու:

Գալով Մորմորոսին, ատիկա կազմուած է գլուխ մը խոշոր սոխէ որուն վրայ շըրջանակեւ խոթուած են 7 փետուրներ, ամբողջութեամբ անիւի մը ձեւ առած: Այդ 7 փետուրները պայման է որ— ըստ Պառաւաշունչ գիտութեան— խլուած ըլլան Բարեկենտանքի կերուխուսներու ատեն մորթուած հաւէ մը, կամ հնդկահաւէ մը և կամ վերջապէս սագէ մը: Սոխին գագաթէն կապ մը հաստատելով՝ մարմինը կը տանին կախել իրենց առօրեայ սենեակին ձեղունէն: Եօթը փետուրները ցոյց կուտան Մեծ-Պահքոց շաբաթներուն տեւողութեան թիւը: Այսինքն առտուները, ժամէն ելլալուն, մէյ մէկ հատ կը քաշեն այդ անիւին թեւերէն. եօթներորդ շաբթուն, այսինքն Զատիկին, վերջին փետուրը սոխին վրայէն ելլելէ վերջ, ծակծկուած սոխը կը ջարդեն այն սոխրացին մէջ որ

յատկացուած է խթումի աւանդական «միտիա տօլմասի»ին: — Այս պարագան ցոյց կուտայ նաեւ անուս հայ խաթուններու՝ ծամանակէ անտեղեակ ըլլալին, որ Մորմորոսը կը գործածեն՝ իւր օրացոյց Մեծ-Պահքոց շրջանին: Բայց օրացոյց ըլլալէ առաջ, պզտիկ անառակ տղոց եղջերուաքղն է անիկա, որմէ կ'երկնչին յոյժ, իւր չար ոգիէ մը և իւր զգուշացունող՝ պահք աւերելէ: «Մորմորոս» բառով ժողովուրդը յօրինած ունի սա պատկերաւից առածը. — Մորմորոսը փեսսելէն՝ Ջասիկը Եւս չի գար, որ համազօր է «արտօնօք գործ տեսնելը յաճախ պարզիւն կ'ըլլայ» յորդորակին: Մորմորոսին հոմանիշ են գաւառական սա այլ և այլ բառերը. — Մրմուս, խամա, ձիկ, խուլուձիկ, ախելուծ, պապիւկալոր, կոկորիձ և այլն:

Պահք բռնելու սովորութիւնը քաղբէնինքը դադրեցուցած են գրեթէ, կազմելու օր ըստ օրեայ վատթարացման հետեւանօք: Աւագ շաբթուն միայն, կը գտնուին դեռ այրեր ու կիներ, որոնք կը սիրեն յարգել բարեպաշտիկ այդ սովորութիւնը, մինչեւ խթման օրը զգուշանալով ճաշակելէ ուտիքի յատուկ կերակուրներ:

Քանի որ Աւագ Շաբթուան խօսքն ըրինք և արդէն մտած ենք նոյն շաբաթը, խօսինք քիչ մըն ալ Աւագ և Որբաթի յատուկ մամիկներու նախապաշարմանց մասին: — Քրիստոսի խաչելութեան ի յիշատակ, նոյն օր շատեր չեն խաչակնքեր, գերեզմանատուն կ'երթան իրենց մեռելներն օրհնել տալու, զիրար չեն բարեւեր, առտուն երեսին չեն լուար և ծով բերնօք մի քիչ քացախ կ'ըմպեն՝ խաչեալ Յիսուսին խմած լիդիին պէս: Կը զգուշանան գամ գամելէ և Աւագ Հինգշաբթիէն առաջ կանանց՝ կար կարելու հետեւ ըլլալին՝ կարծես մատնիչ Յուդային աչքը փորած ըլլալու նախապաշարմամբ է միայն:

ԹԻՈՂԻԿ

(Քաղուած «Պօլիսի Հայեկաբար» անուն անտիպ բառգիրքիս էջերէն):

ՄԵՐ ՍՈՒԳԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱԶԳԸ



Երկու տարի անցաւ այն սեւ օրերէն ի վեր, եւ մենք տակաւին չկրցանք մեր սուգը մոռնալ: Հարուածը այնքան անա- կընկալ էր: Վայրկեան մը այնպէս կար- ծած էինք թէ այս տարաբաղդ ազգը վը- ճտըած վերջացած էր այլեւս արեան լման տուրքը, թէ նոր օր մը ծագած էր ուրնոր կակիծներ պիտի չգային կրկին բանալու հին վէրքերը: Մեր երբեմնի թշնամիները ուն հետ գիրկընդխառնուելու, անցեալը մոռնալով վստահութեան նոր վարկ մը բանալու շրջան մը անցուցած էինք: Եւ անա կիլիկիոյ դէպքը եկաւ ծաղր ընելու մեր միամիտ վստահութիւնը:

Եւ մենք կը սկսինք մտածել թէ արդ- եօք Հայուն համար կարելի է ապահով զգալ: Ազգեր կ'ելլեն եւ կ'իյնան Քաղա- քակրթութիւններ կը ծաղկին եւ կ'անց- նին: Պետութիւններ եւ կառավարութեան ձեւեր կը յաջորդեն: Հայուն նահատակու- թեան վերջը չի գար: Այս է արդեօք մեր սեւ ճակատագիրը:

Զուսահատինք սակայն: Կոյր բազմին խաղալիկները չլին անոնք որ հաւատք մը ունէին, եւ այդ հաւատքին համար գիտ- ցած են սերունդէ սերունդ հազարամեայ անյողդողդ հաւատարմութեամբ գերագոյն զոհաբերութիւնը կատարել: Խաչին պատ- մութիւնը անելի արկած մը չէ, աստուա- ծային ծրագրին իրադրութեան է այն: Եւ Խաչելոյն նահատակուող վկաները այդ ծրագրին իրագործման մէջ իրենց բաժինն է որ կը կատարեն:

Անխմաստ ճակատագրի մը զոհերը չէին մեր այն հայրերը եւ եղբայրները, որոնք Տգմուտի ափերէն մինչեւ Կիլիկիոյ սարե- լուն վրայ մարտիրոս ազգի մը պատմու- թիւնը յօրինեցին կեանքի գինով: Ամենի- մաստ Զօրութիւն մը կայ որ կը զօնէ շաւի- ղը անհատներու եւ ազգերու:

Ամէն ազգ իւր կոչումը ունի՝ իր մաս- նաւոր պաշտօնը կատարելու մարդկային

կեանքին մէջ: Ասորեստան եւ Եգիպտոս պատմութեան արշալոյսին քաղաքակրթ- թութեան եւ գրութեան հիմերը հաւ- տատեցին: Նախնի իլլադա արուեստի եւ գեղեցկապիտութեան օրրանը եղաւ: Հռոմ կարգ եւ կանոն, օրէնք եւ վարչային դրո- թիւն տուաւ աշխարհի: Անգղիա սահմա- նադրական կառավարութեան տիպար եւ սատար եղած է մեր իսկ աչաց առջեւ: Իտալիա երաժշտութեամբ կը դիւթէ մարդկութիւնը: Ամերիկեան հանրապե- տութիւնը գրումաաէրին եւ բանւորին միջեւ եղած յարաբերութիւնը ճշգրիտ անազին պարտականութեան հետ յէմ առ դէմ եկած է: Դիպուածը, ըսեն թերեւս, պարագաներու բերմունքը այսպէս ըրած է. բայց ինչ որ մենք դիպուած, պարա- զաներու բերմունք, միջավայրի կամ դա- րու ոգիի արդիւնք կը կոչենք, գերագոյն Մաքի մը ծրագրին արտայայտութիւնն է վերջապէս: Այս ազգերը կոչուած էին ի- րենց պաշտօնը կատարելու աշխարհին մէջ, ճիշդ ինչպէս Իսրայէլ կոչուած էր մի Աս- տուծոյ հոգեւոր պաշտաման առաջնորդե- լու մարդկութիւնը:

Եւ այն վայրկեանին որ ազգ մը կը մոռնայ իւր կոչումը, եւ կը թերանայ իւր մասնաւոր դերը կատարելու մէջ, այն վայրկեանին կը սկսի անոր անկումը: Վարկած մը չէ որ կը թելադրենք, պատ- մական իրողութիւն մըն է որ մասնաւոր ընել ստիպւած ենք: Ասորեստան միայն այնքան ժամանակ կանգուն մնաց, որքան ժամանակ որ աշխարհի քաղաքակրթու- թեան կը ծառայէր: Հին Յոյները երբ ի- րենց շահած դափնիներով յզփացած, ինք- ղինքնին տուին գեղեստութեան եւ յաւակնոտ պարծենկոտութեան եւ թերացան արուես- տի ծառայելու մէջ, թաւալգլոր ինկան ի- րենց բարձրութենէն: Հռոմ մնծ էր որ- քան ատեն որ օրէնքի պաշտպան էր: Բայց այն օրը որ մոռցաւ իր կոչումը եւ իր իսկ հաստատած օրէնքները ինք եղ- ծանել սխալ, այն օրը կնքուեցաւ անոր մահուան դատակնիքը: Իսրայէլ առանց իր կրօնքին վայրկեան մը իսկ չկրցաւ կենալ Սիօնի բարձունքին վրայ:

Արդ, այս տեսակէտով եթէ նայելու ըլլանք մեր ազգին ալ պատմութեան վերայ, կը տեսնենք որ Հայը կոչուած է քրիստոնեայ աշխարհի ծայրագոյն արեւելեան սահմանին վրայ կանգնիլ, եւ հոն վկայ ըլլալ քրիստոնէութեան իր այս դերը պահանջած է զոհաբերութեանց ամուսնի ծանրը: Բայց այն դիտյած է հաւատարմաբար կանգնիլ եւ կեանքով ու մահով պաշտպանել հաւատքը: Իր երկրին տառուտ ուրիշութիւնն պէս ցցուած է ան դարերով, եւ կուրծք տուած է անհամար բռնուն փոթորիկներու: Արեւելքէն յարձակող բոլոր ոչ-քրիստոնեայ ցեղերը, Պարսիկ, Մոնկոլ, Թաթար եւ ուրիշ ինչ անունով ալ որ ճանչցուին անոնք, որոնք կրկին եւ կրկին փոթորկելով խուժած են դէպի Արեւմուտք, սպառնալով իր խանձարուրին մէջ իսկ ճմլել ոչնչացնել Եւրոպայի քրիստոնէական բաղաբաղրութիւնը: Արարատի շուրջը իրենց դէմ հզօրապէս կանգնած արի մը ժողովուրդի հանդիպած են, որ պատրաստ դառնաւ է միշտ իր կուրծքին վրայ ընդունիլ հարուածին առաջին թափը: Այդ արի մը ժողովուրդը արհամարհելի ոյժ մը չէ, քանի որ գիտէ նահատակութիւն իր կրօնին համար: Եւ եւրոպան այդ նահատակներու անձնուէր եւ ըստ արժանւոյն չգնահատուած դիցազնական գործին կը պարտի այն անվրդով դարերը, որոնց մէջ պատեհութիւն ունեցաւ սկսիլ եւ յառաջ տանիլ քրիստոնէական քաղաքակրթութիւնը՝ որով այսօր աշխարհի կը տիրէ:

Հայոց պատմութիւնը ես այս իմաստով կ'ըմբռնեմ: Սխալ է կարծել թէ այս ազգը սեւ ճակատագրի մը քմահաճոյքին տարաբախտ զոհը եղած է պարզապէս: Եթէ արեւմտեան ազգերը կարող չեն երախտադէտ գնահատումով զմայլիլ Վարդաններու, Լեւոններու, Թաթարեաններու եւ Լեւոնեաններու ազգին վրայ, թող ձանձրութիւն յանձն չառնեն մեզ մեղքը նմու:

Մենք անոնց զգայնիկ վշաակցութեանը չէ որ պէտք ունինք: Գնահատելով

հանդերձ սրտի բարութիւնը, որ մեր այրիններուն կտոր մը չոր հաց հասցնելու եւ մեր որբուկներուն պատսպարան մը հայթայթելու փութացին, թող ներե՛ն մեզի որ գերեզմանոց մը դարձած Կիլիկիոյ աւերակներուն վրայէն մեր կոտորած սրտին խորերէն մեր անկեղծ զգայումը յայտնենք, եւ խնդրենք որ փոխանակ մեզ անչուք մահու մը դատապարտուած անողորմ բախտին ողորմելի զոհերը նկատելով ցաւելու մեր վրայ, ճանչնան մեր արժանիքը՝ իբր Սասունձոյ կողմէ ընտրուած պահապան գունդը, որ մահուան հազարամեայ ճգնաժամի մը մէջ հաստատ բռնած եւ անաղարտ պահած է քրիստոնէական սուրբ հաւատքը:

Եւ մենք ալ չնսեմացնենք յիշատակը մեր նահատակ հայրերուն եւ եղբայրներուն, անոնց վրայ ողբալով եւ զանոնք տարաբախտ զոհերը նկատելով կոյր եւ անլիմաստ ճակատագրի մը: Անոնք աստուածային ծրագրի մը համեմատ փառաւոր դեր մը կատարեցին, եւ մինչեւ ի մահ հաւատարիմ գտնուողներու կենաց պսակը ժողովեցին: Հարուածուեցան բայց չընկճուեցան: Իրենց աղօթաւայրերուն քարու քանդ ըլլալը տեսան՝ բայց մինչեւ վերջին շունչը աղօթելէ չդադրեցան. մեռան՝ բայց կ'ապրին յաղթական, Հաւատքը պահեցին:

Եւ այսօր Կիլիկիոյ նահատակութեան յիշատակը չընենք՝ եթէ պատրաստ չենք անոնց գերեզմանին վրայ ուխտ ընելու թէ Աստուծոյ ողորմութեամբ պիտի ջանանք արժանաւոր յաջորդները ըլլալ մեր մարտիրոսներուն, անոնց նման գիտնալով թէ մեր աստուածային կոչումն է կրօնը կեանքէն աւելի թանկագին բռնել: Եթէ մենք իբր ազգ չգիտնանք հաւատարիմ ըլլալ այս կոչումին եւ հաւատքին մէջ թերանանք՝ կորսնցուցած պիտի ըլլանք մեր գոյութեան պատճառը: մեր մահուան դատակնիքը մեր իսկ ձեռքով կնքած պիտի ըլլանք:

Ոխ չպահենք անոնց դէմ որոնք ագիտութեամբ մեր խողխողիչները եղան. յիշենք թէ մեր նահատակները անոնց հա-

մար աղօթելով փակեցին իրենց աչքերը: Պիտանաք սակայն թէ մենք ա՛յն ատեն մեր դերը կատարած եւ մեր փառաւոր կոչումին հաւատարիմ գտնուած կ'ըլլանք, երբ քաջութիւնը ունենանք ստանձնելու պաշտպանութիւնը Քրիստոսի կրօնքին:

Թերեւս արեան վերջին գինը վճարուած է: Թերեւս այլեւս չկոչուինք հուրի եւ սուրի փորձութեան կուրծք տալ: Կի- լիկիոյ արեգդէմ բլուրները եւ հովիտները Հայ մշակին ձեռաց ներքեւ կրկին կրնան ծաղկիլ եւ պողաքերիլ: Կործանած եկեղեցիները կրնան վերաշինուիլ: Թափուր ամպիւռներէ Աւետարանին յոսադրիչ խոստումները կրնան դարձեալ լսուիլ: Աղօթքի եւ փառաբանութեան, զործի եւ աշխատութեան ներդաշնակութիւնը կրնայ անգամ մըն ալ վերանալ գէպի երկինք: Քաղաքներու եւ գիւղերու մոխիրներէն նոր քաղաքներ եւ նոր գիւղեր կրնան բարձրանալ: Այն ձորերուն մէջ ուր այսօր մահուան լուծութիւնը կը տիրէ, նոր սերունդի մը քայլերուն արոփիւնը արդէն իսկ սկսած է լսուիլ: Միայն թէ Կրօնքը եւ Աստուածապաշտութիւնը պահուին, սրբութիւնը անաղարտ մնայ, եւ գտնուին Հայու զաւակներ, նահատակներու սերունդներ, որոնք յօժար ըլլան Յիսուս Քրիստոսի լոյս հաւատքին համար ապրիլ եւ մեռնիլ:

Ա. Պ. ՇՄԱԽՈՆԵԱՆ

ԱՄՍՆՈՍԻ ՍԱՐԵՐԷՆ

ՆԱՀԱՏԱԿԱՅ ՅԵՇԱՏԱԿԻՆ

«Նահատակք պանծալիք, եւ սիրեցեալք իշխմանաւոր Հօրէն, որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին...»

Ամանոսի (Հայ Լեռ) լեռնաշղթաներու լանջքին վրայ՝ քանդուած հայ գիւղակի մը հրկիղուած եկեղեցիին աւերակոյտին մէջն ենք, որուն ողջ մնացած կոչնակին զիլ ձայնը բեկբեկուն՝ սուր ու տրտմալիւ կը հնչէ լացող ու լացնող շիշտով մը, որ

կ'արձագանդէ սարէ սար, հովոէ հովիտ ու մէջն իմ ստին:

Արեւածագէն շա՛ա կանուխ, ջերմիկ հաւատքով կ'որաքամակ ծերունիներ ալե- փառ, որ կենդանի վկաներն են ու ան- գիր պատմիչները իրենց գիւղին ահաւոր եղիւնին, աւերումին, քանդումին ու սրա- խողխող սպաննումին եւ ողջակիզումին, եկեւ շարուեր են աւեր սրբավայրին մէկ անկիւնը, որոնք իրենց գողգոթուն ձեռ- քերով ու տառապանքի կնճիռն հագած գէմքովնին, կ'ըսեն Աստուծոյ ու ինծի. «Եւ յերկիր մածան մէջք միր»: Ու անդին սգաւոր այրիներ, յոյսի արեւն ու օճախ- նին մարած դժբախտ մայիւր, Հայու կնոջ մասնայատուկ հաւատքով՝ կուրան դառ- նակսկի զկոծանքով մը, քան կ'աղօթեն: Ախ, սակայն, աս սիրտ բզկտող լացքն ալ աղօթք մը չէ՞ միթէ:

Արեւագալի երգն սկսեր է արդէն գիւղի բարի քահանան, որուն կը ձայնակցին ալիքօսիկ փոքրիկ որբերը գիւղին, իրենց սարերուն վաղճւղ արթնցած թռչնիկնե- րուն հետ:

Կ'երգեն ամէնքն ալ հոգեցունց հրզը նահատակաց:

«Նահատակք պանծալիք, եւ սիրեցեալք ի յերկնաւոր հօրէն, որք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին...»

Հոգեկուզումը կը պոթիկայ մէջն իմ խոցոտուած սրտին, փորձ մը կ'ընեմ ես ալ՝ ձայնակցելու երգող քահանային ու որբ տղոց. ա՛հ, սակայն, արցունքը կը խղդէ ձայնս, կոկորդս կը ցամքի, լեզուս կը կարկամի, չըթնեքս կը սառնի ու կը քարանան:

Ու ինծի այսպէս կը թուի թէ՛ հոն, ադ աւերուն սաճարին մէջ, մեր նահատա- կաց հոգիները եկեւ կը թեւածին մեր շուրջն ու իրենց լացող սգաւոր մայրիկ- ներուն, քոյրերուն ու ընտանիքներուն զիւրուն վերեւ, խառնելով իրենց հոգի- ներուն արցունքը մեր արցունքներուն:

Աստուած իմ, աս ի՞նչ զօրեղ հաւատք մըն է Հայուն հաւատքը, որուն առջեւ սարերն իսկ կը սարսին, անտառներու

հսկայ մայրիկները կը հծծեն ու կը կոծեն, կ'ապշին, կը հիանան անտես հողիներն երկնային. ու չգիտեմ թէ Աստուած երբ պիտի լսէ եւ յուզուի դարերէ ի վեր սա լացող ժողովուրդին հաւատքի ձայնը, ու մեղանոյ՜ մեղեքիները Հայու որբուկներու:

Ժամերգութիւնը արդէն լմացեր է, ետիս կը դառնամ քանի մը խօսք ըսելու զարհուրելի գէպքերու սա վերջին իլեակներուն. խորհրդաւոր լուսթիւն մը սակայն կը սիրէ սրբաւայրին մէջ, ու թաց աչքերս պահ մը սեւեռուն կը մնան սա աւեր տաճարին մէջ՝ աւեր սրտով աշօթողներու վրայ ու իրենց բռնիքէն վար ինկած սա անփեսուր որբ եւ վրուցեալ:

Ու կ'ըսեմ. «Յուսով խնդացեմ, մեղութեան համբերեցեմ, աղօթից սեպ կացեմ»: Սակայն կը շուարիմ թէ ինչպէս բացատրեմ սա անբացատրելի վշտերու, անուր նեղութեանց մէջ տուայտողներուն «յուսով խնդացեմ»ը: Ա՛խ, որքան զգուշ եմ դառնապէս լացողներու՝ յուսով խնդացեմ ըսելու: Բոլոր հոգեկան ուժերուս կոչում կ'ընեմ այնպիսի վայրկեան մը, ուր ամենէն պերճախօս բեմասացն իսկ կը շուարի, կը տատամախ Յոյսը, հաւատքը, համբերանքը արդէն կեանք չեն եղած Հայուն. ան՝ անով է ապրելը, անով է տառապելը, անով է մեռելը իր աւեր տաճարին մէջ, իր քանդուած օճախին ծոցը:

Եկեղեցիէն դուրս ենք ելած: Ամանոսի ձիւնապատ սարերուն կը նայիմ թաց աչքերովս, ուսկից թխալոտ ամպեր սրարչաւ կ'ընթանան դէպի հարաւ արեւմուտք: Աղօթողներն ու լացողները ցրուած են. լուռ է գիւղակը մեռելական լռութեամբ մը, ու մահն արդէն իր սեւ թիւն է տարածել լեռներու կատարներէն մինչեւ սա հիւղակները, ուր գացին որբերն ու այրիները դարձեալ իրենց ողբերգը հիւսկու: Ու դեռ իմ ականջիս ու հոգիիս ալուրդ մէջ կ'արձագանգուի քանդուած հայ գիւղակին աւերած եկեղեցիին մէջ բարի քահանային ու որբ փոքրիկներուն արեւազայի երգին ձայնը արտամղին:—

«Նահաւա՛կք պանծալիք, եւ սիրեցեալք ի յերկնաւոր հօրեմ, ուր մկրեցալք ընդ Քրիստոսի արեւմբ ձերով ի մահ խաչին...»

ՍՍՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ.

Գրեց Շապին Դարահիսարի Յոյն մեղրապօլիս Տ. Պոլիկարպոս Բսօմիասիս:

Հայ եւ Յոյն եկեղեցիներու մերձեցումին ամենէն աւելի ջատագով Շապին Դարահիսարի Յոյն մեղրապօլիտ Տ. Պոլիկարպոս Բսօմիասիս հրապարակ հանեց «Հայ եկեղեցին ուղղափառութեան տեսակետով» խորարդին տակ գրքոյկ մը, որ տակէ տակ Քոնստանդնուպօլիս թերթին մէջ իր հրատարակած յօդուածներուն մէկ հաւաքածոն է: Գրքոյկը որ երկու մասերէ կը բաղկանայ, հակառակ իր փոքր ծաւալին, շատ բան կը խօսի Հայ եկեղեցւոյ պատմութեան եւ անոր ուղղափառութեան վրայ: Ա. Մասին մէջ յարգելի հեղինակը Հայ ուղղափառ եկեղեցւոյ համառօտ մէկ պատմութիւնը կ'ընէ, հաստատութեան թուականէն մինչեւ 1179: Այս մասին Ա. գլխուն նիւթերը կը կազմեն. — Հայ եկեղեցւոյ հաստատութիւնը. — Իւր յարաբերութիւնները Յոյն եկեղեցւոյ հետ. — Իւր բաժանումը (սպսնառներ). — Երկու եկեղեցիներու միջեւ Քալկեդոնի ժողովին պատճառով յառաջ եկած կրօնական վեճերը:

Յարգելի հեղինակը Հայ եկեղեցւոյ հաստատութեան վրայ խօսելու ատեն, կը ներքողէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, նկարագրելով անոր հաւաքը, Տրդատ թագաւորի դարձր ի Քրիստոնէութիւն:

Հայ եւ Յոյն եկեղեցիներու սիրալիր յարաբերութեան իբր ապացոյց յառաջ կը բերէ Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի Ժողովներուն: Հայ եկեղեցւոյ մասնակցութիւնը, որոնց Ա. եւ Բ.ին Հայոց կողմէ իբր պատգամաւոր ներկայ գտնուած են, կ'ըսէ Ս. Արիստակէս եւ Մեծն Ներսէս, իսկ Եփեսոսի Ժողովին թէ եւ ներկայացուցիչ չեն ունեցած Հայերը, սակայն զրաւարապէս համամտութիւն ցոյց տուած են

ժողովին որոշումներուն, Մեծին Սահակայ կաթողիկոսութեան օրով:

Քաղկեդոնի ժողովին՝ երկու Եկեղեցիներու մէջ յառաջ բերած վէճերը նկարագրելու ատեն, Բիւզանդեան կայսրութեան եւ Սասանեան թագաւորութեան ներքեւ գտնուող Հայերու յարաբերութիւնները շատ պաղ կ'ին, կ'ըսէ, մանաւանդ որ պարսկական բաժնին մէջ ապրող Հայերու լուծն ալ շատ ծանր էր:

Քաղկեդոնի ժողովին մանրամասնութիւնները հոս յառաջ բերելը աւելորդ նշկատելով, ըսենք անմիջապէս թէ՝ Տ. Պօղիկարպոս իւր հետազոտութիւններուն մէջ ոչինչ կրցած է գտնել Հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան դէմ:

Ա. մասին Բ. գլխուն մէջ, Քաղկեդոնի ժողովէն ետք Հայ Եկեղեցւոյ վիճակը կը նկարէ Տ. Պօղիկարպոս, եւ այս առթիւ Հայ Եկեղեցւոյ հայրապետներուն միաբնակներու եւ բոլոր հերետիկոսներու դէմ՝ Հայ Եկեղեցւոյ ուղղափառութեան պաշտպանութիւնը կը ջատագովէ:

Տ. Պօղիկարպոս լռութեամբ կ'անցնի սակայն Յունական եւ Հռոմէական Եկեղեցիներուն զաներէցութեան նպատակով Հայ Եկեղեցւոյ դէմ յարուցած խնդիրներու մասին՝ որոնց փափաքն էր Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութիւնը իրենց հպատակեցնել:

Ինչպէս յայտնի է, Քաղկեդոնի ժողովի խնդիրները առաջին անգամ Բարզէն կաթողիկոսի օրով սպրդեցան Հայոց մէջ: Բարզէն աշտուրջ կաթողիկոսը՝ Վրաց եւ Աղուանից խորհրդով եւ հաւանութեամբ Վաղարշապատի մէջ ժողով գումարեց, ուր միայն երեք ամեզերական ժողովները ընդունուեցան:

Թարգելի հեղինակը Հայոց եւ Վրաց դաւանակցութեան մասին ալ թէեւ բան մը չէ ըսած, սակայն մինչեւ 1179 թուականը իրարու յաջորդող կաթողիկոսներու գործերը ծանօթացուցած է իր ընթերցողներուն, եւ իր ուսումնասիրութեան մէջ զիմած է նաեւ Յոյն եւ Եւրոպացի եկեղեց. պատմագիրներու վկայութեան:

Բ. մասին մէջ, օգտուելով հայագէտ հանգուցեալ Տիմիդրիօս Չօլաքիտէսի հայ. կրօնական գրութիւններու թարգմանութեանէն, կը խօսի հայ ժամակարգութեան վրայ: Տ. Պօղիկարպոս իբրեւ եզրակացութիւն իր ուսումնասիրութեան, կ'ըսէ եւ կը խոստովանի թէ Հայ Եկեղեցին Ուղղափառ է: Հոս է ահա յարգելի հեղինակին մեծութիւնը: Հայերը երբէք եւտիքական կամ միաբնակ չեն եղած, կ'ըսէ: Հայերը հերետիկոս կոչելը պարզապէս անմտութիւն է, վասն զի անոնք հաւատաւոր Հանգանակը ընդունելով՝ ապացուցած են թէ՛ երկու բնութիւն կը խոստովանին Յիսուսին մէջ, աստուածային եւ մարդկային բնութիւն:

Հայերը եթէ հերետիկոս ըլլային, հոռմէականներու պէս պիտի խանգարէին Հանգանակը՝ անոր մէջ մտցնելով նորութիւններ: Ս. Աստուածի մասին խօսելով կը մերժէ Հայոց վերադրուած հայրաշարժաւթիւնը:

Հայերը, կ'ըսէ, Ս. Աստուածը կ'երգեն ի դէմս Որդւոյն Աստուծոյ, որով կ'ընան աւուր պատշաճի ըսել նաեւ, որ յարեաւ, որ խաչեցաւ, եւ այլն:

Աւելցնելէ ետքը որ Հայերը կը մերժեն եւ կը նշուին Եւտիքէսը՝ բոլոր ուրիշ հերետիկոսներուն հետ, ինչպէս Արիոսը, Նեստորը, Սամուսացին, Լեւոնը եւ այլն, կ'ըսէ թէ Հայերը հակաքաղկեդոնական չեն, եւ հետեւաբար երկու կողմին ալ փոխադարձ զիջողութիւններով կ'ընան վերջնել հերձուածը եւ համար Միութեան:

Իր դրաւածներէն, դատելով շատ ազատամիտ կը գտնենք Շապին Գարահիսարի լրջախոհ մուրապոյիտը, վասն զի Սահմանադրութենէն առաջ եւ ետքը գրեթէ առաջին անգամն ըլլալով կը հանդիպինք Յոյն եկեղեցականի մը, որ երկու քոյր Եկեղեցիներու միութեան կը փափաքի հրապարակայն խոստովանութեամբ թէ «Հայք հեթեթիկս չեն»:

Իր մաղթանքներուն մէջ անկեղծ կը գտնենք զինքը. եւ սակայն քանի որ ժամանակը հասած ըլլալ կը կարծուի, կը փափաքինք զիմանալ թէ որպիսի զիջո-

ղութիւններով կարելի է հասնիլ բաղձաց-
ուած միութեան: Գոյնիոյ յարգիլի մ գ-
րողութեամբ, իր այս անկեղծ յայտարարու-
թեանն ետք, անտարակոյս պիտի հաճի
պարզել նաեւ փոխադարձ զիջողութիւններու
մասին իր նոյնքան անկեղծ արամադրու-
թիւնները՝ որով կրկնապէս շնորհապարտ
պիտի թողու զմեզ:

ԹԱՐՈՒԹԻՒՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ՄՐՏԻՆ ԾԱՐԱԷՐ

Եթէ որ ծարաւի իցէ եկեացէ
առ իս եւ արքցէ: Յովհ. Ա. 7-37

Ա.

Կայ մէկը որ չհասկնայ ծարաւը կամ
ծարաւի պէտքը երբեք զգացած չլինի, եւ
կամ պիտի գտնուի՝ մի անհաստ որ կեանքի
օրերուն մէջ այդ պէտքը չհոգայ. նոյն-
պէս ալ ամէն անկարոր Աւետարանի ճըշ-
մարտութեան հասու է, կարելի չէ որ
ազդուած չլինի այս խօսքերէն թէ «Եթէ
ծարաւի ես ինծի եկուր ու ես պիտի խմ-
ցընեմ»: Ու այս խօսքերը ո՛րչափ ընտանի
են, նոյնչափ քաղցր չեն հնչեր մեր
ունկերուն, ու ամենահասկնալի, ընտանի,
քաղցր ոճով մը. — Եկէ՛ք ու ծարաւնիդ
պիտի անցընեմ:

Ծարաւը իւրաքանչիւր կեանքի մէջ
կը ծնի այն օրը երբ ծնունդ կ'ունենայ
յաշխարհի, ու այդ պէտքը ամէն օրուան
համար կայ ու պիտի մնայ, ու կեանքը
պարտաւոր է այդ ծառայութիւնը կատա-
րել ամենայն փութկոտութիւնով: Ուտես-
նուած չէ որ մէկը ծարաւը յագեցնէ
ջուրէն զատ տարբեր նիւթով մը: Հա-
կառակէն սխալ մը, զարտուղութիւն մը
կեանքին մահը կամ փձացումը պիտի
փութացնէր: Այս պաշտօնին ու ծառայու-
թեան անհոգները, ծայլերը՝ պիտի համար-
ուին անգիտակներ, ամենատարրական,
բնական ու սովորական ծառայութիւններու
մէջ իսկ:

Միայն թէ երբ կեանքի ծարաւը
ըսենք, լոկ ջուրին ծարաւը պիտի հաս-

կընանք ու ջուրը պիտի կրնայ երբեք ան-
ցշնել Սրտին Ծարաւը. երբ Աւետարանն
ալ արդէն սրտին ծարաւին, կ'աւանդէ
ալ որոշ գիտնալու ենք թէ կեանքի, այ-
սինքն բնութեան ծարաւը չպիտի կրնայ
լիովին յագեցնել, ու չենք ալ սպասեր
որ կարենայ ամբողջովին գոհացնել, վասն
զի կար փորձերով եւ բիւրաւոր օրի-
նակներով հասկցուած է թէ ան չունի
լիովին եւ երբեք մեր պահանջածը, աւելի՛
սրտինը. եւ բուն ատոր համար է որ պէտք
է երթանք տարբեր ջրի Ակի մը, Աղբիւրի
մը որ բղիւէ կենդանութեան ոռոգուն ջրե-
րը, որուն մէկ ումպը պիտի կրնայ ամ-
բողջ ծարաւը յագեցնել. ու ահա կեանքի
խուզարկութիւնները, անոր մանրակեր-
կիտ փնտռութեանը սա վախճանին ու ել-
քին յանգած են թէ մեր ներքին ու ար-
տաքին մարդը իր լրիւ գոյութիւնով չըս-
պասեր ջրով գոհացնել բուն կեանքի հիմնա-
կան ծարաւը, ու մտածելը պատրանք մը,
յուսուլը խարկունք մը պիտի լինէր: Իրա-
կանը, ճշմարիտը՝ Սրտին Ծարաւն է, ու
այդ մեր կեանքի առջեւ միշտ պիտի ցցուի:

Արտաքին ու ներքին մարդուն մէջ
կեցած այս տարբերութիւնը, անհամե-
րաշխութիւնը, շատ անգամ նաեւ հակա-
սութիւնները, անտանելի կը դառնան եր-
բեմեւ եւ ծնունդ կուտան անհանդուրժելի
ժամերու, եւ մարդուն կը մնայ որոշ,
կարուկ եւ վերջնական ճամբով մը գիմել
Անոր որ ծարաւը պիտի յագեցնէ, անոր
որ կեանքը պիտի բարձրացնէ սրտին չափ,
պալա թէ ոչ սիրտն է որ կեանքին հաւա-
սար պիտի իջնայ, հոն պիտի փոքրկանայ,
գռեհկանայ, ստորնանայ, թշնամանայ, ած-
խանայ ու փձանայ, միշտ ծարաւած:

Սիրտը անօթ մըն է պատուական, ոս-
կեղէն ու բիւրեղեայ. ան շատ կ'արժէ,
ու առաւել քան զոսկի եւ արծաթ, գոհար
ու մարգրիտ, անոր բուն արժէքին հաւա-
սար գին վճարել չէ՛ կարելի. բայց մինակ
այն սրտերը՝ որուն տէրերը գիտակ են
արժէքին ու արժանիքին, անանկներուն
քով որ գիտեն պահել մաքուր պահա-
րաններուն մէջ: Ահա՛քը առանց սրտի

չպիտի արժէր ոչինչ, ինչպէս շէնք մը առանց բնակչութեան. ուրեմն պէտք է պահել իր սրբութեան, մաքրութեան, բարձրութեան ու մեծութեան մէջ, կեանքին ափն է ուրկէ պիտի բզկի յորդի բարի գործը, արդարութիւնը, հեղութիւնը, խոհմութիւնը, զգացումը, հայրենասիրութիւնը և այն ամէնը որ կեանքը կատարեալ կ'ընեն: Սիրտը կեանքին աղբիւրն է, ուրեմն զայն պահել պէտք է ամէն աղտեղութիւններէ, ցեխերէ, լճացումներէ, որ շարունակ հոսի, յորդի և գլխաւոր զուլալ ու հեղալ, սանտրակ ու կաթնորակ: Սրտի աղբիւրը մշտական ու տեւական պահելու համար կենդանի Արի հետ պէտք հաղորդակցութեան մէջ լինի որ մշտնջենական լինի հոսումը: Ինչպէս որոշապէս գիտենք թէ թանկարժէք առարկաները աւելի լաւ պահպանումի կը կարօտին, զի վտանգը պտոնց գլխին կեցած է ու տէրերը շատ անգամներ մեծածախս շինութիւններով ու պահպանակներով կը պաշտպտեն, այնպէս և սիրտը կեանքի թանկարժէք հարստութիւնն է ու անոր վտանգները բազմապիսի են:

Պէտք է մեծ ուշադրութիւնով անոր պահպանումին հոգատար գտնուիլ. զի ամենէն աւելի մեծ վտանգներ կը սպառնան իրեն, անոր վրայ է որ կը խուժեն աջէն ու ձախէն, ամէն բոլորի պատրաստ են զայն սեւելու, բծաւորելու, ակտաւորելու, թունաւորելու: Ծարաւին կը դառնայ ճշմարիտ Տէրոջը, անոր հոգատարութեանը. ու նոյն ձայնը՝ եթէ ծարաւի ես եկուր ինծի...:

Շատ դառն է հետեւանքը, երբ սիրտը ծարաւին համար պահ մը զարկ ունենալէ դադրի, ահա մահը, այդ մեծ վտանգը տիտան կեցած է: Փորձով ամէն ոք գիտէ թէ կեանքի ծարաւները շատ են, նոյնչափ ջրի տեսակները, և իւրաքանչիւր ծարաւի մը յագեցումը նոր նոր ծարաւներու ծրնունդ կուտայ, և նորանոր աղբիւրներու գտնումին ալ միջոց ու պատճառ. մին միւսին ծնունդն է ու պատճառը. մինակ ծարաւներու պէտքը և յագեցնելու միջոցը

լաւ աշխատութեան ու ընտրութեան կը կարօտի:

Ունինք մտքի ծարաւը. սա՛ կը թուութեան, գիտութեան, իմաստութեան աղբիւրներու ջրովը կարելի է յագեցնել, ու եթէ չկրցար, պիտի նմանիս մէկի մը որ ահագին ծովի մը քով կեցած չի կրնար իր ծարաւը յագեցնել:

Ունինք զգացումի ծարաւը, սա՛ մինակ սրտի ջրովը կրնայ յագեցնալ խառն մտքի առուակներովը:

Ունինք սեփի ծարաւը, սա՛ կրնայ ժուժկալութեան, առողջապահութեան, աշխատութեան ջրովը գոհանալ:

Ունինք վայելքի, հաճոյքի ծարաւը. սա՛ միայն կրնայ կշտանալ պարզասիրութեան, տնտեսագիտութեան, չափաւորութեան, բարոյականութեան մշտնոգ ջրովը. ու երբ իւրաքանչիւր ծարաւի բուն իր ջուրը չենք տար, ահա ծարաւներու շարք մը, որոնք մեզ անհանգիստ ու ապերջանիկ կ'ընեն. համարէ մի խելանի՛ կամ հարուստ, ուժեղ և կամ պաշտօնատար, նոյն ինքն միլիառատէր կամ նոյն ինքն մի ինքնակալ, ամառուան տօթագին օրի մը սաստիկ տապ ունի ու անկուշտ ծարաւութիւն մը. եթէ ջուր չգտնէ կամ աղբիւրի մը չվաղէ, իր ամբողջ մատենադարանը, առասպելական գանձարանները, ուժը, կայսրութիւնը պիտի կրնա՞ն ծարաւը յագեցնել երբ ջուր չկայ, կամ ինք ջուրին չքալէ: Ծարաւողը պէտք է ջուրին դիմէ, եւ եթէ երբեք կ'ուզէ անխառն ու անխառն ջուր խմել, պէտք է ակին դիմէ:

Ծարաւը մեզի երկու բան կը սովորեցընէ. մին թէ պէտք մը ներսէն կուգայ ու պարտք մը որ դուրսէն կուգայ զայն լիցնելու. ու երբ դուսէն գտնուածը չի յագեցնէր ներսինը, պիտի հասկցուի թէ արտաքինը իր մէջ չունէր և կամ չէր պարունակէր յագեցումի նիւթը, ու ահա մեր ներսը զգացումած ծարաւը արտաքին յագեցուցիչ հեղուկներով չպիտի կրնայ գոհացուիլ. ուրեմն յագեցնենք սրտին ծարաւը որ է Սրբութեան ծարաւը, Լոյսի ծարաւը, Սիրոյ ծարաւը: Սիրտը սրբութեան

կը կարծաւի ու լոկ ատոր պապականիճ է, ու այդ միակ ծարաւը զԱստուած տեսնելն է, մեծ Ահնէն կշտանալն է որ բիւրիցս երջանիկ ու երանելի է. -- «Երանի այնոցիկ որք սուրբք են սրտիւք, զինոքս զԱստուած պեսցեն»:

Այո՛ տեսնելը ունենալն է, ունենալը վայելելն ու յագեցումն է, ու քրիստոնեան պիտի կրնայ տեսնել հոգիի աշերովը, պիտի ընդունի սրբութեան ընդունարանովը, որոնք սրբուած կամ աւելի ուղիղը պէտք է մաքրուած ըլլան բարութեան, սրբութեան, արդարութեան, եղբայրսիրութեան, գթութեան, հեղութեան, խոնարհութեան, խոհմութեան, արիութեան, ազնուութեան, վեհաշնորհութեան անուշ դեղերով: Պէտք է խմել անմահութեան նեկտարէն, որ դարերու անմեռ արիւնը հոսի կեանքի երակներու մէջը: Այո, գեղերը պիտի կրնան սրտի մահացու արիւնոտ հիւանդութիւնները առողջացնել, որք են չարութիւն, ատելութիւն, օխ, մահաւնք, կոյր նախանձ, անիրաւութիւն, ագահութիւն, նենգութիւն, կեղծաւորութիւն, հրպարտութիւն, անբարոյութիւն, ստութիւն: Ծարաւի ենք ու այդ ծարաւը պիտի զգանք, ցորչափ կեանք ու կենդանութիւն ունինք և ցորչափ ուժերը չեն սպառած, կեանքը չէ մարած, սիրտը չէ դադրած, աշերը չեն փակուած, չունչը չէ հատած, միտքը չէ խամրած, հոգին բոլորովին չէ կորսուած: Դիմենք մեծ Ահին, ահերու Ահին, խնդրենք, եւ եթէ չստանանք՝ բաղխենք, եթէ չբացուի՝ ուժ գին աղաղակենք, զի ծարաւը սաստիկ կը տապէ մեզի, կը տենչանք լաւութեան, կը բաղձանք երջանկութեան. ու եթէ դարձեալ ծարաւի ենք, պատճառներուն խորը խռարակներ. ծարաւը սրտին քրիստոնէին մահն է եթէ չգոհացուի, իսկ հոգացուիր՝ կեանքը, ներկային ու հեռաւոր ու մշտնջենաւոր ապագայինն ալ:

Քրիստոնեայ անհատը պէտք է գիտնայ թէ առանց սրտի սրբութեան պիտի նմանէր չոր ու աւաղուտ անապատի մը, ուր չգտնուիր կանանչի ծիր մը կամ ծղօտ մը, թուի մը, կանաչ կենդանութիւն մը:

Հոն չպիտի ճվայ թռչունը ու դայլայլէ սոխակը, ծաղիկը հոն չպիտի ծաղկի ու ոսկեբոյր խնկումը չպիտի ոլորաի, կեանքը հոն դիակնացած, բոյս ու բուսականութիւնի սպառ վերջացած, ու բնաւ ծնած չպիտի լինին, վասն զի հոն ջուրն է որ կը պակսի, հոն ծարաւն է որ իր յագուրդը չի գտներ: Սիրտը առանց սրբութեան անհուն ովկէանի մը պիտի նմանի ուր հիմնական հաստատութիւն գոյութիւն չպիտի ունենայ, ու շքեղ շէնք մը չպիտի զարդարէ անոր լոյծ հիմը, ինչ որ դաշտին ու փառահեղ լեռներու գոգին կը ծնին շէնքերու սքանչելիքները և հաստատութիւններու գեղեցկագոյնները: Ու չէ՞ որ անհիմն այդ լոյծ երկիրները երբեմն ալ խռոված, խելըռած, հարբած գինեմոլի տատանումները, խեղճութարիկները կը ծնին և կը կոհակեն, ու ջարդ փշուր կ'ընեն անհաստատուն տուներն ու ամեն կենդանութիւն, երբ անոնք հաստատութեան մը վրայ չեն հիմնուած: Սիրտը առանց սրբութեան ծարաւի յագեցումին, քանի մը երեւութական, ձեւապաշտական, արտաքինական խաբուսիկ գոհացումներով չի կրնար հանդարտիլ, մեղմանալ, ծարաւն անցնիլ. սա արտաքին երեւոյթները ճիշտ պիտի նմանին փոքրիկ փայտի կտորի մը, որ ովկէանին մէջ անընթաց ու միշտ տատանեալ վիճակ մը պիտի ունենայ:

ԳԵՌԳԻ Ծ. Վ. ԱՍԼՆՆԱՆ

ԱՆԿԵՂՄՈՒԹԻՒՆ

ԵՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ

ՎԵՐՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՆ ԱՌԹԻՒ

Տաճարի համակրելի եւ հմուտ աշխատակիցը՝ Գալրիկ՝ անցեալ չարթուան իր գրութեամբ երկու խոշոր պակասներ կը մատնանչէր Պոլսահայ քահանայութեան քով, նախ անկեղծութեան եւ յետոյ զարգացումի պակասը:

Նախորդ շարթուան Համագումարի քուէարկութեան արդիւնքը մամուլի եւ ժողովրդային դասակարգին մէջ անախի

տպաւորութիւն մը յառաջ բերաւ, որ դժբախտաբար հայ քահանայութեան պատիւը բարձրացնելու հանգամանքը չունէր, եւ զրոյցներ կան թէ Ազգ. Ժողովի անդամք համաձայնած են չեղեալ համարելու կատարուած ընտրութիւնները:

Փութանք ըսել որ, միմիայն իբրեւ ժողովուրդին բարոյականին ու կրօնական զգացման զօրացման նուիրուած պարբերական մը, կը զգուշանանք վիճաբանութեանց գուռ բացող խնդիրներու վրայ խօսելէ: Հետեւապէս ընտրուածներու անձնական արժանաւորութեան վրայ չպիտի ուզենք խօսիլ: Կ'ենթադրեմ որ Համագումարին անդամոց մեծ մասը այն մտածումը ունէր թէ երբ հոգեւորական մը առանց եկեղեց. իշխանութեան կողմէ արգելքի ենթարկուելու կը կատարէ արարողութիւններ, կը մօտենայ Եկեղեցւոյ Ս. Խորհուրդներուն, իրենք առանց խղճահարութեան քուէնին կրնան տալ անոր:

Մտածելու այս կերպին մէջ է ահա բովանդակ սխալը Համագումարի կարգ մը անդամոց, որոնք տարբերութիւն մը չեն դնել որ եւ է անձի մը ազգային կեանքին եւ եկեղեցական կեանքին միջեւ: Անհրաժեշտ էր, սակայն, ուշադրութեան առնել Ազգային Ժողովին կամքը, մասնաւորապէս յայտնուած՝ քուէ շահող եկեղեցականի մը, ըսենք իր անունով՝ Երէցեան Սրբազանի մասին: Իր ամէնէն ջերմ համակիրներուն չափ յարգելով հանդերձ ն. Սրբազանութեան արժանիքը, պէտք է ըսենք որ Ազգ. Ժողովին այդ կամքին առջեւ պէտք է տեղի տար ամէն նկատում: Պէտք չէր կատարել այնպիսի ընտրութիւն մը, որ հակասէր Ազգ. Ժողովին — ազգին գերագոյն մարմնոյն — անդամոց ստուար մեծամասնութեան մտածելու կերպին, պատճառ մը կարենար ըլլալ լայնցնելու եւ խորունկցնելու այն խրամատը որ դժբախտաբար բացուած կը թուի ազգին հոգեւորական եւ աշխարհական դասակարգերուն միջեւ: Համագումարի նիստը Պատրիարքարանի դահլիճին մէջ բացուելէ առաջ, Մայր Եկեղեցւոյ խորհրդարանին մէջ կարծիքի փոխա-

նակութեան մը՝ միջոցին այս տեսակէտը պարզուեցաւ բաւական թուով ընտրողներու որոնց մէջ վարդապետներ ալ կային. բայց արդիւնքը ցուցուց թէ ականջ կախող չէ եղած այդ կարգի նկատողութիւններու: Ըստ մեզ, Երէցեան սրբազանի քուէ տուող եկեղեցական Հայրերը աւելնէն գէշ ծառայութիւնն էր որ մասնացին անոր. առիթ տալով նոր խնդիր մը յարուցանելու իր անունին շուրջը, եւ ժողովրդային ստուար զանգուածի մը հակակրօնական առարկայ դարձնելու: Երէցեան Սրբազան պիտի կրնայ կրկնել ծանօթ խօսքը.

— Աստուած, դուն զիս ազատէ իմ բարեկամներուս ձեռքէն, թշնամիներուս հոգը ես վրաս կ'առնեմ:

Այդ կարգի նկատողութիւններ կրնան յայտնուիլ ուրիշ մէկ երկու ընտրուածներու մասին ալ, որոնց անդ — ինչպէս օրաթերթերը չեշտեցին — կարիւր էր ընտրել բարձր արժանիքի տէր եկեղեցականներ, ինչպէս Ամեն. Դուրեան սրբազան, թողլով քահանաները, որոնց մէջ ալ ազգին խղճամօթէն եւ օգտակարապէս ծառայելու կարող անհատներ չեն պակսիր:

* * *

Ինչ պէտք է հետեւցնել այս իրողութենէն Դժբախտաբար ճիշդ այն, զոր կ'ըսէր Դադրիկ: Ազգային կեանքի գիտակցութեան, եւ յրջահայեաց փորձառութեան պակասը բացայայտ կ'երեւայ ընտրութեան արդիւնքէն, որու յայտնուէն ետք միայն սկսան ճիշդ այն դիտողութիւնները որ անկէ առաջ պէտք է ըլլային, եւ հետեւապէս շատ բան կորսնցուցին իրենց կարեւորութիւնէն: Այդ արդիւնքը, եւ դիտողութիւն ուղղելու կերպը եւ ժամանակը միացած, տխուր գաղափար մը կազմել տուին հայ ժողովուրդին՝ հայ հոգեւորականութեան վրայ: Հոգեւորականութիւն, կ'ըսեմ, ընդհանուր առմամբ ամուրի եկեղեցականութիւնն ալ միասին առնելով: Որովհետեւ, հակառակ որ ազգը շատ աւելի հոգածութիւն ցուցած է զարգացեալ վարդապետներ

ուհեննալու, անոնք այսպիսի պարագաներու մէջ կը թերանան զգուշացնելէ իրենց քահանայ եղբայրները որ սխալ ճամբու չհետեւին: Եթէ քահանաներէ ոմանք սխալած են այս կամ այն ընտրելիքն տալով իրենց քուէն, կամ անոր ընտրութեան յաջողութեան համար աշխատելով, — ինչ որ քաղաքակիրթ երկիրներու մէջ բացարձակապէս օրինաւոր պայքար մը նկատուած է, — կը հաւաստուի թէ վարդապետներ ալ գտնուած են, որոնք իրենց բոլոր ազդեցութիւնն ու գիրքն ի սպաս դրած են միմիայն իրենց ընտրութեան յաջողութեան, մինչ քահանային ալ, վարդապետին ալ պարտականութիւնն էր՝ հաւասարապէս՝ քուէարկութեան պահուն խղճի ձայնին միայն մտիկ ընել. եւ ազգին ներկայացուցչական բարձր ժողովին ղրկել այնպիսի եկեղեցականներ, որոնք իրենց հատուկեամբ ու կարողութեամբ եւ բացարձակապէս անաղարտ համբաւով արժանաւորապէս ներկայացնեն այնտեղ հայ հոգեւորականութիւնը:

Բայց եղածին վրայ ծանրանալ չարժեք առկէ աւելի. այսչափն իսկ աւելորդ պիտի ըլլար, եթէ չուզէինք ատիկա փորձառական դաս մը նկատել մեզի: Գաղղի, Գաղղի, Գաղղի ընկերներէն հետ — որ ստացական բան մը չէ — փափաք կը յայտնէր քահանան աւելի՝ զարգացած տեսնելու, ինչ որ կարելի կը նկատէր բարձրագոյն Ընծայարանի մը հաստատումովը: Սրտագին կը ծափահարենք ամուրի եկեղեցականի մը կողմէ յայտնուած այս փափաքը, որ մեր հոգեկան ներքին իղձն է, ու թէեւ զրմուարարոյ խնդիր մը, բայց անհնարութիւն մը չէ. եւ կը զարմանանք թէ ազգային վարդի շրջանակներու կողմէ ինչո՞ւ պէտք եղած ուշադրութիւնը չընծայուի առոր, ջանք մը չերեւիր զարգացեալ քահանայութիւն մը պատրաստելու:

Եւ պակաս, հայ քահանայութիւնը խոշոր սխալի մը մէջ կը յարատեւ մնալ, իր գիրքին բարձրացումն ու զօրացումը միայն ազգէն եւ հոգեւոր վարչութիւնէն ալնկալելով, Դուք եւզ օգնէ, եւ Աստուած ալ

եւզ պիտի օգնէ: Առաւել քան երբէք ճշմարիտ է ասիկա հայ քահանայութեան համար, ինչ որ աւ քահանայութիւնը այս ուղղութեամբ, աղատութեան առաջին խանդավառ օրերէն ցայսօր Գահանայական Միութիւն մը կազմելու ձեռնարկը խանձարուրին մէջ խղճուեցաւ, մէկ քանի միամիտներու — որոնց մէջ կը գտնուի այս տողերը ստորագրողն ալ — ժողովրդեան հաւատքը զօրացնելու եւ նոյն ինքն քահանայական դասուն իմացական զարգացումին նպաստելու եւ բարոյական ու նիւթական զիրքը բարձրացնելու անկեղծ եռանդին դիմացն ելնելով արհամարհոտ անտարբերութիւն մը, ամէնէն ազնիւ, իտէալ ձգտումներու նկատմամբ: (*)

Միեւնոյն անտարբերութիւնը ի յայտ եկաւ դժբախտաբար ազգային եւ հոգեւոր կեանքի վանազան կարեւոր հարցերու մէջ:

Տաճար առիթը չփախցուց ձեռքէ, քիչ մը ոգեւորելու քահանայական դասը, սթափեցնելու զայն իր թմրութենէն, եւ կծու բառեր ալ սպրդեցան մեր գրչէն. եւ սակայն ատոնք մնացին ձայն բարբառոյ յանսպառի, պղատոնական հաւանութիւն մը միայն գտնելով մէկ քանիներէ:

Յաւալի վիճակ մըն է այս, ու վհատեցնող հանդամանք մը կ'առնէ ամէն ճշմարիտ կրօնասէրի համար, որ ի՞նչ կէ եկեղեցին պայծառ, եւ հայ հոգեւորականութիւնը, մասնաւորապէս քահանայութիւնը տեսնել իր պաշտօնին գիտակցութեանը մէջ:

Տխուր, տխուր է այս:

ԶՍՐՄՍՅՐ ՔԱՀԱՆԱՅ

(*) Միեւնոյն զիտողութիւնը նոյնքան իրաւամբ կրնանք ընել ամուրի եկեղեցականութեան ալ, որուն ծրագրած վարդապետական Միութիւնն ալ չկրցաւ մարմին առնել. ու գնաց թաղուեցաւ Գահանայական Միութեան քով:

Կրօնական Խորհրդածութիւններ

ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ



ՊԷՊՏԻ Է ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

«Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ Մարդոյ և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս»: — «Ջրանն, զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք»:» (ՅՈՒՆ. Զ. 54 և 64 :)

Պէտք է հաղորդուիլ, Բրիստոնեայք: Այս մեծ եւ փառաւոր օրուան մէջ, ուր քրիստոնէական եկեղեցին, ոգեւորուած Տեառն մերոյ Յիսուսի Բրիստոսի կեանքին աստուածային յիշատակներով՝ կը պանծայ, եւ Անոր պատուէրին համեմատ կը կատարէ Հաղորդութեան Խորհուրդը, եւ հաստատապէս կը հարցնեմ թէ՛ հաղորդ՝ հրուն եւ թէ՛ Հաղորդութիւններուն, թէ «պէտք է հաղորդուիլ, Բրիստոնեայք». այսինքն՝ պէտք է եկեղեցի զալ եւ հրապարակաւ Սուրբ Սեղանին մօտենալ՝ ճաշակելու համար սրբազործուած հացն ու գինին:

Հաղորդութիւններ զարմանալի պիտի գտնեն այսպիսի հարցում մը. որովհետեւ մասնակցելով Սուրբ Խորհուրդին, արդէն կը կատարեն իրենց քրիստոնէական միակ պարտաւորութիւնը. իսկ Հաղորդութիւններ, ի՛նչ նկատումով ալ չուզեն հաղորդուիլ, անշուշտ պիտի հետաքրքրուին, թէ ի՛նչո՞ւ համար եւ այսպիսի հարցում մը կ'ուղղւի քրիստոնէայ հաւատացեալներուն այսօր, այս մեծախորհուրդ օրուան առթիւ:

Պէտք է հաղորդուիլ, Բրիստոնեայք:— Այո՛, կը հարցնեմ. որովհետեւ այնպէս կը կարծեմ որ Հաղորդութիւնը տարտամ կերպով հասկցուած է հաւատացեալներու կողմէն. եւ այս տարտամ հասկըցողութիւնը պատճառ եղած է, որ ոմանք հաղորդուելով քրիստոնէական-ծիսական պարտք մը կատարած ըլլան. ոմանք ալ, —եւ անշուշտ չատեր, չատեր են ասոնք, —անսարքեր մնան հաղորդութեան հանդէպ,

թերեւս իրենց կեանքի բոլոր ընթացքին մէջ:


Պէտք է ուրեմն, ամէնէն առաջ վերցնել տարտամութիւնը եւ ճշդել հաղորդութեան հասկըցողութիւնը: Ասիկայ գիտակցութեան պարտքն է: Կարելի չէ տգէտ մնալ մեր հոգեւոր կեանքի շինութեան եւ զօ, այդման օգնող պարագաներու մասին: Բրիստոնեայ մարզը՝ իր քրիստոնէութեան ամէնէն կենսական պայմանները պարտաւոր է լաւ գիտնալ, պայծառօրէն տեսնել զանոնք, որպէս զի անոնք որ կը կատարեն իրենց պարտքերը՝ գիտնան թէ ի՛նչ կ'ընեն, եւ անոնք ալ որ անտարբեր են, տեսնեն թէ ի՛նչչափ անիրաւ են եւ ի՛նչչափ հակասական՝ իրենց անուան եւ գործին մէջ:

Հաղորդութիւնը ուղիղ յարաբերութիւն մըն է: Մէկու մը հետ յարաբերութեան եւ ուղիղ յարաբերութեան գաղափարը, առանցքն է պարկեշտ եւ լաւ հասկըցուած գո՞ծունէութեան մը՝ նոյն իսկ աշխարհի մէջ: Մարդիկ տեսակ տեսակ յարաբերութիւններ ունին իրարու հետ, եւ այս յարաբերութեանց պայմանները ո՛րչափ լաւ հասկըցուած են, այսինքն որչափ լաւ ճշդուած են, այնպէս որ ո եւ է մթութիւն, իրկղիմութիւն, առաձգականութիւն չգտնուի ատոնց մէջ, այդպիսի յարաբերութիւն մը կամ հաղորդութիւն մը այնչափ ամուր կ'ըլլայ, տեւական կ'ըլլայ անկեղծ կ'ըլլայ, միտքարական եւ քաջալերական կ'ըլլայ, եւ կը պսակուի բաղձացուած արդիւններով:

ԿԻԼԻԿԻՈՅ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ



Տ. ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿ. ԴԱՆԻԵԼԵԱՆ



Տ. ԵՂԻՇԵ ԵՊԻՍԿ. ԿԱՐՕԵԱՆ

(Տեսէ՛ք Ազգային Կեանքի Բաժինը)

Քրիստոնեայ մարդուն՝ Քրիստոսի հետ ունեցած յարաբերութիւնը կամ հաղորդութիւնը առանց պայմանի չէ։ Քրիստոնեայ մարդիկ ապրիլ կ'ուզեն. ապրիլ կ'ուզեն երջանիկ կեանք մը. եւ Քրիստոս առանց այս արդար եւ իրաւացի տենչանքին արդիւնաւորման եւ փոստաւորապէս պսակման համար պայման մը կը դնէ. — «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ որ չուտէք Որդւոյ Մարդոյ մարմինը եւ չխմէք անոր արիւնը, կեանք չէք ունենար»։ Քրիստոսի մարմինը ուտել եւ արիւնը խմել. ահա՛ պայմանը։ Բայց ո՛ւր պիտի գտնեն քրիստոնեայք Քրիստոսի մարմինն ու արիւնը։ Միայն սուրբ սեղանի՞ վրայ։ — Ո՛չ, մինչեւ հոս զալու համար չա՛տ ատեն կայ, եթէ միայն Սուրբ Սեղանէն հաղորդուելով լիննար խնդիրը, ամէն քրիստոնեայ մարդ երջանիկ պիտի ըլլար։

Որպէս զի լաւ հասկնանք Քրիստոսի

խօսքերուն իմաստը եւ հաղորդութեան արժէքը, նկատի պէտք է առնենք այն պարագան, որ Քրիստոս վճռապէս ըսաւ մեր բնաբանին խօսքերը։

Գալիլիոյ ծովուն եզերքը հինգ հազարներու հրաշապէս կուշտու կուռ յագեցումէն ետքը՝ Քրիստոս անցած էր Կափառնաուտ, իր մարմարաշէն սինակոկով երեւելի այդ ծովափնեայ քաղաքը։ Ձրի հացին համէն հրապարուած ժողովուրդը հասաւ Սնոր ետեւէն եւ հարցուց. «Ռաբբի, ե՛րբ եկիր այստե՛ղ», վա՛րդապետ ե՛րբ եկար հոս։ Օ՛հ, ըսել ուղեց Յիսուս, շոգորդութիւն չեմ ուզեր. զիս կը փնտռէք ո՛չ անոր համար որ հրաշք մը տեսաք, այլ անոր համար որ ձրի հաց գտաք եւ կշտացաք։ Դէ՛հ, գացէք, գացէք, աշխատեցէք, ոչ թէ կորստական հացին, այլ այն հացին համար որ յաւիտենական է եւ զոր ես պիտի տամ ձեզի։ Շա՛տ լաւ, ըսաւ ժողովուրդը. այդ աստուածավայել

աշխատութեան համար ի՞նչ ընելու է։ Պէտք է ինծի հաւատաք, պատասխանեց Յիսուս։ Ժողովուրդը ըսաւ. Հրաշք մը գործէ, որ տեսնենք եւ հաւատանք. առանց հրաշքի ի՞նչպէս հաւատանք. տե՛ս, Մովսէս մարգարէ Անապատի մէջ մանանայ տեղացուց եւ մեր հայրերը կերան։ Շատ կը սխալիք, պատասխանեց Յիսուս. Մովսէս չէր մանանան տեղացնողը, այլ Հայրս. եւ Հայրս ձեզի կուտայ երկնային ճշմարիտ հացը, բուն մանանան. վասն զի Աստուծոյ տուած հացը այն է, որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կուտայ աշխարհի ժողովուրդը գինովցած այս խօսքերու ազդեցութեան ներքեւ, ըսաւ. «Տէ՛ր, այդ հացը ամէն ատեն տուր մեզի»։ — «Ե՛ս եմ հացն կենաց», այդ կեանքի հացը, այդ կենդանի հացը ե՛ս եմ, պատասխանեց Յիսուս. ինծի եկողը, ինծի հաւատացողը, պիտի չանթեմնայ երբէք եւ պիտի չծարաւի։ Ես երկինքէն եկայ՝ ոչ թէ իմ կամքս կատարելու, այլ Հօրս կամքը, որ զիս զրկեց. եւ Հօրս ալ կամքը սա է, որ Անոր ինծի տուածներէն մէկ հատն ալ չկորսցնեմ, եւ զիս տեսնողը եւ ինծի հաւատացողը յաւիտենական կեանք պիտի ունենայ։

Հրեաները սկսան տրտնջել. ի՞նչպէս կ'ըլլայ, որ այս մարդը է՛րսէ թէ ես երկինքէն եկայ. ասի Յովսէփին տղան չէ, իր հայրն ու մայրը կը ճանչնանք։ Յիսուս լսեց անոնց տրտնջը եւ ըսաւ. — Մի՛ քրքրիք մընչէք, մի՛ ապշիք. ըսածներս պարզ բաներ են. մէկը չկրնար ինծի գալ՝ եթէ զիս զրկող Հայրը չքաշէ զանի. գրուած է որ ամէնքն ալ Աստուծմէ ուսած պիտի ըլլան. արդ՝ որոնք որ ուսած են, ինծի կուգան։ ՉԱստուած տեսնող չկայ, բայց ես տեսած եմ, որովհետեւ ես իմէ եմ. ով որ զիս կը տեսնէ, զԱստուած տեսած կ'ըլլայ։ Մի՛ զարմանաք ուրեմն, երբ կ'ըսեմ թէ ե՛ս եմ հացն կենաց։ Ինչո՞ւ կը պարծիք ձեր հայրերով, անոնք անպատի մէջ կերան մանանան եւ մեռան. բայց ով որ զիս՝ երկինքէն իջած այս հացը՝ ուտէ, պիտի չմեռնի. այդ հացը իմ մարմինս է, ե՛ս եմ, զոր պիտի զոհեմ աշ-

խարհի կեանք տալու համար։ Մի՛ վիճիք, մի՛ զարմանաք, այս այսպէս է։ Ճեմարիս, ճեմարիս կ'ըսեմ ձեզի, քե՛ որ չուսեմ Որդւոյ Մարդոյ մարմինը եւ չխմեմ անոր արիւնը, կեանք չեմ ունենար։

Ոչ միայն ժողովուրդը, այլ նոյն իսկ իր աշակերտներէն շատեր շատ խիստ զրտան այս բացատրութիւնները, այս աշխարհութիւնները եւ ըսին. «Խիստ է բանդ այդ, ո՞վ կարէ լսել դժա»։ Եւ Յիսուս պէտք զգաց անգամ մըն ալ շեշտել իր ըսածները. «Այդ գայթակղեցուցանէ՞ զձեզ»։ Ինչո՞ւ կը գայթակղիք խօսքերէս. քիչ ետքը սակայն պիտի համոզուիք, երբ ես զոհուիմ՝ այս բանի համար եւ վերադառնամ եկած տեղս։ Պէտք է զիսնաք, որ ես հոգեկան իմաստով խօսեցայ ձեզի. վասն զի «հոգի՛ն է կենդանարար. մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք»։

Ահա Աւետարանական դրուագ մը ուր կը տեսնենք, թէ ի՞նչ պարագաներու մէջ յայտարարեց Քրիստոս իր ունեւորիններուն, թէ կեանք չէք կրնար ունենալ թէ որ չուտէք իմ մարմինս եւ չխմէք իմ արիւնս, եւ թէ՛ իմ խօսածներս՝ կեանք են, հոգի են։

Կը տեսնէք անշուշտ, քրիստոնեայք, թէ հաղորդութիւն, հաղորդուիլ՝ ամէնչն առաջ կը նշանակէ եւ պէտք է նշանակէ անսխալ եւ անխեղաթիւրելի հասկեցողութիւն մը Քրիստոսի եւ քրիստոնեաներուն մէջ, այսինքն ուղիղ յարաբերութիւն մը Քրիստոնէի համար բուն կեանքը, երջանիկ կեանքը Քրիստոսի խօսքերուն գործադրութեան մէջ է։ Մարդիկ չեն կրնար կեանք ունենալ՝ եթէ չսպրին այն սկզբունքներով, որոնք քարոզուած եւ նուիրագործուած են Քրիստոսի կենդանի կեանքով եւ աւետարար խօսքերով։

Քրիստոնեայ մարդը միշտ ուղիղ յարաբերութեան մէջ է Քրիստոսի հետ՝ երբ որ կը գործադրէ Անոր պատուէրները. եւ այսպիսի յարաբերութիւն մը իսկապէս բարեկամական է. այսինքն՝ ո եւ է կեղծիք եւ խարդախութիւն, զաղտնամոտութիւն չկայ այդ յարաբերութեան կամ հա-

ղորդութեան մէջ, չկայ ո եւ է կողմնակի, լուեւայն, ստորին, գծուծ շահ մը, որ պարսկուած ըլլայ բարեկամական կեղծիքներուն աակ: Քրիստոսի բարեկամները, այսինքն՝ Քրիստոսի հետ ուղիղ յարաբերութիւն կամ հաղորդութիւն ունեցողները, անոնք են որ կը կատարեն իր խօսքերը, իր պատուէրները: «Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր եմ պատուիրեմ ձեզ» (Յովհ. ԺԱ. 14):

Այս բացատրութիւններէն ետքը գարծեալ կ'ուզեմ հարցնել: «Պէտք է հաղորդուիլ»:— Անտարակոյս: Հաղորդութիւնը, իբր ուղիղ յարաբերութիւն, բնական եւ կանոնաւոր արդիւնքն է մեր քրիստոնէական կեանքին: պէտք է հաղորդուիլ, եւ հաղորդուիլ արժանաւորութեամբ:

Այն մտղը, որ քրիստոնեայ անունը կը կրէ, պէտք է ապացոյցը տայ իր քրիստոնէութեան, ինչպէս ըսի, ամենէն առաջ ապրելով քրիստոնէական կեանք: Այսպէս ապրուած կեանք մը՝ մշակողնաւոր հաղորդութիւն մըն է Քրիստոսի կեանքին, զոր տուաւ «վասն կենաց աշխարհի»: Քրիստոնեայ անունը կրողը կամ քրիստոնեայ է կամ չէ: Կարելի չէ որ պրծի ան այս երկսայրաբանութենէն: Եթէ քրիստոնեայ է, պէտք է ըլլայ գիտակցութեամբ, անկեղծ հասկեցողութեամբ, եւ ցոյց տայ թէ ինքը հաղորդութեան մէջ է Քրիստոսի հետ: Հակառակ պարագային՝ քրիստոնեայ անունը անիմաստ է, ո եւ է նշանակութիւն չունի: Անուն եւ գործ, պաշտօն եւ պարտք՝ իրարմէ չեն կրնար զատուիլ, երբ զատուին՝ այն ատեն ծայր կուտան զեղծումներ, անտարբերութիւններ՝ իրենց բոլոր հետեւանքներով, որոնք տխուր են, տխուր:

Չեմ գիտեր թէ հիմայ ի՞նչ կը խորհին հաղորդուողներ եւ չհաղորդուողներ հաւասարապէս. այսինքն՝ ի՞նչ կ'ըսեն թէ՛ անտարբեր քրիստոնեաներ հաղորդութեան մասին, եւ թէ՛ հաղորդուող քրիստոնեաներ որոնք հաղորդուելով պարտք մը կը կատարեն պարզապէս:

Թող խորհին անոնք ինչ որ կ'ուզեն եւ ինչ որ պիտի ըսեն. ես անգամ մըն

ալ կը չեշտեմ, թէ ուղիղ յարաբերութիւնը, այսինքն՝ Քրիստոսի հետ քրիստոնէին ունեցած ամենօրեայ գործնական հաղորդութիւնը, բացարձակ պայման մըն է այս Հաղորդութեան, ծիսապէս կատարուող Խորհուրդին հաղորդելու համար: Վասն զի, բարեկամական յարաբերութիւն մըն է ասի, եւ Քրիստոսի բարեկամները անոնք են որ կը գործադրեն Անոր պատուէրները: Իսկ Անոր պատուէրներն ու խօսքերը կեանք են:

Եւ այսպիսի կեանքի մը փառաւոր յիշատակութեան Խորհուրդն է, որ իր պատուէրին համաձայն, կը կատարենք միշտ եկեղեցւոյ մէջ հացով եւ գինիով, եւ այսպէս կ'ուզենք ապացոյց տալ, թէ մենք քրիստոնեաներս ուղիղ յարաբերութեան կամ հաղորդութեան մէջ ենք Քրիստոսի հետ, թէ մենք կը ճանչնանք ու կը գնահատենք «վասն կենաց աշխարհի» զոհուած կեանքին արժէքը, թէ մենք՝ մէկ կողմէն գործադրելով իր պատուէրները եւ միւս կողմէն հաղորդուելով իր մարմնի եւ արեան Խորհուրդին՝ վերանորոգութիւն մը, վերածնութիւն մը կ'զգանք մեր ներսը, կը զօրանանք Անոր գերազանցապէս մաքուր կեանքին սքանչելի արտայայտութիւններուն ազդեցութեամբը, Անոր գերազանց բարութեամբը, Անոր անօրինակ անձնուիրութեամբը, Անոր աստուածային մեծութեամբը որ կը ցոլար անսահման խոնարհութեան մը մէջ, Անոր փրկագործ մահուամբը. մահ մը անիման, որուն միակ նպատակն էր իր խօսքին ու գործքին ճշմարտութեանը վկայել:

Քրիստոնեայք, պէտք է հաղորդուիլ:— Ա՛լ ո՞վ պիտի չուզէր հաղորդուիլ: Անտարբերներ:— Օ՛հ, անոնք լրջօրէն պիտի մտածեն իրենց վիճակին վրայ՝ երբ հասկընան թէ Քրիստոսի հետ հաղորդութիւնն ու բարեկամութիւնը՝ անհրաժեշտ են իրենց կեանքին ու կենցաղին մաքրութեան եւ ազնուացման համար. հպարտներն ու անձնասէրները, որոնց կեանքը սահմանափակուած է իրենց եսին, իրենց մեծութիւն կարծած պղտիկութիւններուն մէջ, որոնք չեն հասկընար թէ ընդար-

ձուկ կեանքի մը վեհափառ հանգրուանին վրայ Քրիստոս զոյց կուտայ իրենց կեանքի ուղիղ գիծը: Մեղաւորները, որոնք կը կարծեն, թերեւս, որ իրենք մոռցուած, կորսուած արարածներէն են: Բայց ո՛չ. նոյն իսկ գեո առնոց կ'ուղղուին Աւետարանին խօսքերը. չէք կրնար մաքրուիլ, սրբուիլ, լաւ կեանք մը ունենալ՝ մինչեւ որ չուտէք մարմինս ու չխմէք արինս, մինչեւ որ չկատարէք խօսքերս ու պատուէրներս, որոնք կեանք են, հոգի են: Պարզապէս ծիսական պարտք մը կատարողները, եւ սակայն ո՛րչափ օգտակար պիտի ըլլար այսպիսիներուն համար համոզուիլ, թէ ծէս մը կատարելը չափ դիւրին է. բայց պարտք մը կատարելու գիտակցութիւնը դնել այդ ծէսին մէջ, դժուարին գործ մը: Այսպիսիներ ինքնին պիտի հասկնային, թէ պէտք եղած արժանաւորութիւնը կը պակսէր իրենց՝ ճշմարիտ հաղորդութեան եւ ուղիղ յարաբերութեան համար:

Պէտք է հաղորդուիլ, ուրիմն, եւ հաղորդուիլ արժանապէս, գիտնալով թէ հաղորդութիւնը երջանիկ կեանքի մը ապացոյցն է քրիստոնեայ մարդու համար, թէ Քրիստոնէին եւ Քրիստոսի անկեղծ ու մշտնջենաւոր բարեկամութեան հաւատարմութիւնն է, թէ մեր հոգեւոր փրկութեան, այսինքն մեր անմեղութեան համար խաչուած եւ խոցոտուած կեանքի մը մեծ խորհուրդին: հաղորդութիւն մըն է այդ:

Քրիստոնեաներ իրենց ողջմտութեան, իրենց գիտակցութեան ամէնէն ուղիղ եւ հետեւարար ամէնէն անհրաժեշտ փաստը ընձեռած պիտի ըլլան՝ հասկնալով հաղորդութեան ստոյգ պէտքը: Ո՛րչափ բարոյական, նոյնչափ ալ բանական հարկադրութիւն մըն է քրիստոնեաներու համար զոյց տալ այդ փաստը իրենց հաւատացեալի կեանքին մէջ:

Մարդ պարզապէս սկսածամիտ պէտք է ըլլայ՝ չհասկնալու համար Գողգոթայի Մեծ Զոհին յայտնի նշանակութիւնը արեւդիւրքի քաղաքակրթական կեանքին մէջ, եւ անոր մշտնջենաւոր յիշատակութիւնը, անոր խորհրդաւորուած զենումն ու պա-

տարագումը Եկեղեցւոյ սեղանին վրայ, պատարագ մը որու պատմական արժէքն ալ կը փառաւորուի եւ կը վերյիշատակուի Աւագ Հինգշաբթիի հայրենի եւ հայնի անուշութիւններուն մէջ:

Հայոց ժողովուրդ, գիտցի՛ր յարգը Մայրենի Եկեղեցւոյդ, որ իր դորաւոր զենումներուն ու պատարագումներուն մէջ միշտ բարձր բռնած է իր նշանակալի, Մեծ Զոհին յիշատակը, եւ աշխատած է հաղորդ շնել անոր խորհուրդին՝ իր սիրելի զաւակունքը:

Հայոց ժողովուրդ, ամուր բռնէ մաքուր եւ ազնիւ կեանքի սկզբունքները, որոնք քեզ պահեցին լուսաւորութեան մէջ՝ թոյլ չտալով որ խղուի եւ աղարտուի ուղիղ յարաբերութիւնդ ու հաղորդութիւնդ փրկութեան, յառաջգիմութեան եւ կատարելութեան հետ:

Այսպիսի ողջմտութեամբ, գիտակցութեամբ եւ կորովով հաղորդուէ՛ եւ փառաւորէ՛ կեանքդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, Ամէն:

ԱՍԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Աւագ հինգշաբթիի առթիւ Ս. Հաղորդութեան տօնին նշանակութիւնը հեղինակօրէն բացատրուելէ ետք Գեր. Տ. Բարգէն Եպիսկոպոսի հմուտ լօգուածով, շահեկան եւ այժմեական է բացատրել նաեւ Ունալուայն, լսեմ օրինակ խոնարհութեան՝ Աստուածորդիին կողմէ մարդոց ցուցումը: Ընթերցողները հաճոյքով եւ մեծ օգուտով պիտի կարգան աշխարհիկ գրողի մը՝ Յակոբ Էֆ. Սեւանյուզեանի հետեւեալ հատուածը, որ խորունկ խոկումներու պիտի ենթարկէ ոչ միայն աշխարհականները այլեւ, ու մանաւանդ, կարգ մը կրօնաւորներ . . . :

ՈՏՆԼՈՒԱՅԻ ԱՌԹԻԻ

Ամէն անգամ որ այդ արարողութեան ներկայ գտնուիմ, խորապէս կը յուզուիմ. արնքան վսեմ բան մը կայ այդ պարզ գործողութեան մէջ որ մարդ սարսուռ մը կը զգայ իր մաղերուն տակ ու մտամոխի

կը կասի, կ'արձանանայ, կը մնայ ակնապիշ:

Ահեղ, խորագրեցիկ դաս մըն է որ կը տրուի մարդկութեան. — Խոնարհութեան դասը, բարոյականի ամէնէն բարձր դասը:

Երբ կը տեսնեմ այն շողշողուն, փառազարդ եպիսկոպոսը, ոսկեճամուկ զգեստներով զարդարուած, ակնախտիդ խոյր ի գլուխ, հովիւի գաւազանի ձեռքին, խորանին առջեւ, իր բովանդակ փողօրն մէջ, որ կը մերկանայ իր զարդերէն, կը ծալլէ մէկզի կը դնէ իր մեծութիւնը, ու պարզ չապիկով մը զենջակը կը սփածանէ եւ կ'երթայ ժամկոչին(1) առջեւ կը ծնրադրէ ու անոր ոտքերը կը լուայ. . . կը համակուրծ Խորհուրդին վեհութեամբը եւ աչքերս արցունքով կը լեցուին:

Կարելի չէ երեւակայիլ խրատ մը աւելի ներգործող, դաս մը այնքան ազդու, այնքան տիրող հրամայող, դաս մը վերջապէս Երկնաւոր Վարդապետի արժանի:

Մարդ հո՛ն է որ գաղափար կ'ունենայ թէ որքա՛ն քաղցր բան է խոնարհութիւնը, ո՛րքան պաշտելի է խոնարհ մարդը, մանաւանդ երբ մեծ մարդ մըն է անիկա, մեծ՝ գիրքով կամ տիտղոսով: Խոնարհութիւնը կուգայ ան ատեն ուրիշ մեծութիւն մըն ալ կը դրոշմէ անոր վրայ, հոգիի մեծութիւնը, որ բուն մեծութիւնն է, ու պատկառանքը ան ատեն միայն կ'ըլլայ ճշմարիտ պատկառանք:

Երբ կը տեսնեմ մեր մեծատուններուն մէջ ամբարտաւաններ, հայ ընկերական շրջանակներուն մէջ գոռոզ ու խրոխտ գլուխներ, որ կը փքանան, կը յօխորտան, ու պաշտօն եւ երկրպագութիւն կը պահանջեն ամէն տեղ, Երկնաւոր Վարդապետը կը յիշեմ, խեղճ ձկնորսներու առջեւ խոնարհած. ու կը մտածեմ թէ, եթէ իրօք մեծ են այդ մարդիկ, ի՞նչ պէտք ունին ամբարտաւան ըլլալու՝ քանի որ խոնարհութիւնը այնքան սիրուն է, այնքան աղէկ կը վայլէ մեծութեան:

(1) Յարգելի գրողը գլխէ անշուշտ Թէ եպիսկոպոսը ժամկոչին ոտքը չէ որ կը լուայ, այլ քահանային և դպիրներուն: Իր ըրածը կամաւոր չափաւանգութիւն մըն է ապահովաբար, գաղափարին մեծութենէն ցոլացնելու համար:

(Ծ. Խ.)

Իսկ երբ կը տեսնեմ parvenue-ներ որ՝ անոնք ալ ինքզինքնին մեծ մարդ կը նկատեն, որովհետեւ պաշտօնեայ են Ընկերութեան մը մէջ, տուն մը ունին սիւնաղարդ, քարաշէն, կամ՝ եթէ կ'ուզէք, սեղանաւոր են, վաճառական, կամ պարզ արհեստաւոր կամ ոչինչ, բայց անպատճառ ուրիշներէն տարբեր խմորէ շինուած ըլլալ կը կարծեն, գիւղին «մեծ»ն են, թաղին աւագը, եւ կամ մեծ մարդ են պարզապէս, որովհետեւ այսպէս կ'ըսէ տէրտէրը կամ ժամկոչը, շիտակը, բոլորովին ափ ի բերան կը մնամ, եւ բնաւ չեմ կրնար բացատրել այդ մաթիոց ամբարտաւանութիւնը:

Պզտիկներուն քով եթէ ամբարտաւանութիւնը ծաղրելի է, մեծերուն քով անտանելի է, եւ առաջադրուած նպատակին ճիշդ հակառակին կը տանի:

Եթէ մեծերը ամբարտաւան ըլլալով կը կարծեն թէ աւելի յարգանք կը ներշնչեն, կամ աւելի բարձր մակարդակի մը վրայ տեղաւորած կ'ըլլան ինքզինքնին, թող հաւաստի ըլլան թէ չարաչար կը սխալին. ընդհակառակը շատ կը պզտիկանան, խոտելի միայն կը դառնան ու վերջապէս չեն սիրուիր:

Մեր հայրուստներուն կամ մեծերուն մէջ ոմանք կան որոնց եթէ տունը երթալու ըլլաք, անմիջապէս կը զգաք թէ ի՞նչ ամբարտաւան մարդու մը հետ է գործերնիդ. հանգիստաւորութիւնը, ծանր շուքը իրենց հաւատալիքն է. դաւանանքի մը խորարմատ համեմատութիւններուն տարուած կը տեսնէք կը նշմարէք այդ ծանր շուքը. դրան զանգակէն սկսելով մինչեւ ընդունելութեան սրահը. ու ո՛րքան ալ պատուեն մեծարեն զձեզ, չէք կրնար սիրել, չէք կրնար հաշտուիլ այդ ծանր շուքին հետ որ կը ճնշէ ձեր վրայ, եւ զոր դուք բոլորովին աւելորդ կը նկատէք: Զեզի այնպէս կ'երեւայ որ աւելի պիտի սիրէիք այդ մարդիկը եթէ շուքը, ծանր կամ թեթեւ, անիւ. կամ ո՛չ, վերնար մէջտեղէն բոլորովին, ու պարզ անսեթեւ հիթ երես մը տեսնէիք ձեր առջեւ. կը նեղուիք, կը զայրանաք վերջա-

պէս, ու չէք ուզեր յարաբերութիւն ունենալ այդ մարդոց հետ:

Մինչդեռ անդին ուրիշներ կան, պետական, առևտրական եւ այլ ասպարէզներու պատկանող անձնաւորութիւններ կամ անձեր, որոնց հետ ընտանեւոր կը նստիք, կ'ելլէք. կը խօսիք, ու միշտ անկեղծ գոհունակութեամբ մըն է որ կը զատուիք քովերէն. կը սիրէք զիրենք ու կը կապուիք հետերնին. ատոնք այն կարգէն են որ համոզուած են թէ նկարագիրը, յատկութիւնն է որ կը սիրուի մարդուն քով՝ պարզ, անփառունակ, ու ո՛չ թէ շուքը կամ հանգիստաւորութիւնը. եւ եթէ յարգուի կը փափագին, ինչ որ ամէն մարդու իրաւունքն է, ամէն բանէ առաջ կը մտածեն արժանի ըլլալ յարգանքի. բայց միւսները խունկ ու մոմ՝ կ'ուզեն, այո՛, խունկ ու մոմ՝ որ պէտք է անպատճառ իրրեւ բռնի հարկ մը մատուցուի իրենց:

Ամէնէն զարմանալին ո՞ր տեղ է, գիտէ՞ք. երբ այդ տեսակ մարդոց դէմ՝ արժանապատուութեան դէմ խոկուն ըմբոստութեամբ մը՝ կռնակ կը դարձնէք, երես չէք աւար, կարեւորութիւն չէք բնծայեր, ան ասին ալ իրենք ձեզի կ'ամբաստանեն իբրեւ . . . ամբարտաւան, իրենք կը սկսին խոնարհութեան քարոզ կարգալ ձեր գլխուն:

Խոնարհութիւն չէ անոնց պահանջածը այլ ստորնութիւն, որ ամէն մարդու գործ չէ:

Եւ երբ իրենք «ամբարտաւան» կ'ըսեն, «հպարտ» ըսել կ'ուզեն:

Բայց հպարտութիւնը բոլորին տարբեր բան է ամբարտաւանութենէն: Հպարտութիւնը առաքինութիւն մըն է որ նուաստութենէն կը խորշի, ստորնութեան չի գիջանի: Իսկ ամբարտաւանութիւնը մոլութիւն մըն է որուն ուղղակի հակառակն է հեղութիւնը, համեստութիւնը: Հպարտը կը խոնարհի, բայց չի ստորնանար. իսկ ամբարտաւանը չի սիրեր խոնարհիլ, բայց ի պահանջել հարկին գիտէ ստորնանալ:

Օհ, ատելի են այդ մարդիկը, եւ ան-

տանելի, մանաւանդ երբ կեղծ համետութեան ձեւերն ալ առնեն երբեմն զիգերնին կըշտով, ձախերնին ցածցնելով կամ քամակնին ծռելով. — համոզմամբ ամբարտաւան հոգիներ որոնց էութիւնը միշտ կը մնայ ամբարտաւան:

Ինծի մնար՝ բոլոր այդ մարդիկը կը հաւաքէի շա Ոսկուայի առթիւ, եւ . . . մէյմէկ ղենջակ կը կապէի մէջքերնին ու կ'ըսէի. — Լուացէ՛ք նայիմ սա ժամկոչին ոտքերը:

ՅԱՆՈՐ ՍՌԱՄՊՈՒԼԵԱՆ

ԾԱՂԱՋԱՐԴԻ ՄԱՆՈՒԿ-ՔԱՐԸ

Ի դէպ եւ գերազանցօրէն այժմեական է ընթերցողին ներկայացնել հետեւեալ սիրուն աւանդավէպն ալ, զոր իրեն խկատիպ եւ յանկուցիլ ոճով մը գրի աւած է Սնգիր Դըպրուծեան: Կեղինակը, Վահան Վրդ. Տ. Մի. նասեան. —

ԱՌԱՆԴԱՎԷՊ

Ծաղկազարդի օրը. — ո՞վ չէ լսեր մեր պապերէն ու մամերէն այս սիրուն վէպիկը, — երբ Յիսուս առօք-փառօք Երուսաղէմ կը մանէր, կին մը տրտում-տխուր կը հեկեկար եւ կ'արտասուէր. Հակապատկի՛ր տեսարան, զի այն օր բովանդակ ժողովուրդը ցնծութեան մէջ էր՝ շնորհաւորելով Յիսուսի այս փառահեղ ու շնորհարկը գալուստն ու մուտքը Երուսաղէմ:

Ինչու կուլար այս կինը. — Վասն զի ամուլ էր, եւ օրէնքը արգելած էր ամուլներու մասնակցութիւնը այս օրինակ հանդէսներու:

«Ա՛հ, կը հեծեծէր այս կինը, ինչու եւ ալ Իսրայէլի այս կիներուն պէս մանկիկ մը չունենայի գիրկս եւ անոնց մէջ չխառնուէի, եւ այս օրուան աստուածային օրհնութեան տրժանք չըլլայի»:

Կ'երեւայ թէ այս կինը կը հաւատար թէ Մեսիան է Յիսուսը, խոստացուած Փրկիչը:

Տէր Յիսուս «Որ նստեալ յէջ եւ յաւանակի իշոյ մտանէր ի Գաղաքն Սուրբ», տեսու այս կինը, եւ արգահատելով ահնարկեց թագէի, մեր առաքեալին, որ խ-

կոյն այդ կնոջ քով վաղելով՝ բարկացայտ դէմքով հարցուց թէ ի՞նչու կուլայ եւ օրուան ուրախութեան մէջ տրտմութիւն կը խառնէ :

Կինը՝ ահաբեկ եւ ամօթահար՝ հեկեկաց . «Տէ՛ր ,ամուլ եմ եւ . . .» :

Թաղէոս կ'ընդհատէ անոր խօսքը . «Լալէդ չճաթեցա՛ր եա՛ , իեղք չե՞ս ընե՛ր , քար մը առնել , քուրջով պլլել եւ զոյն գրկած՝ փութալ ընդ առաջ» :

Կինը առանց ամփնայու ուրիշներուն ծիծաղներէն՝ որոնք Թաղէի այս խօսքն ու խրատը լսած էին , գրկեց իսկոյն քար մը , պլլեց ծրարեց լաթով եւ խառնուեցաւ բազմութեան մէջ :

Այլ ո՛րքան մեծ եղաւ զարմանքն անոր սւ անոնց՝ որոնք այս կնկան այո մանկիկին քարէ պէպէք մը ըլլալը գիտէին , երբ տեսան որ այդ մանկիկը լեզու ելեր եւ կը ճուար անդադար . «Ովսաննա» , երբ Յիսուս իր հակառակորդներուն պատասխանած էր . «Եթէ դոքա — Իսրայէլացի մանկիկները — լռեսցեն , քարինըդ աղաղակեսցեն» :

Այլ Տէրը նայեցաւ Թաղէին , որ այս քարէ պէպէքին հեղինակն ու հայրը եղած էր , եւ ըսաւ . «Թաղէ՛ , այդ քարէ ծնուած չօճուխը , քարէ պիտի մեռնի , քարկոծ պիտի ըլլայ , եւ քու ժողովուրդդ քարէ ծնուած ժողովուրդ պիտի ըլլայ՝ քարի պէս հաստատուն իր հաւատքին մէջ» :

Բոլոր հին աւանդութիւնները , որոնց մէջ են հին Յայսմաւուրքն ու ժողովածուն , միաձայն են թէ պէպէք-քարն էր Սուրբ Ստեփաննոս , որուն կնքահայրն եղաւ Թաղէոս առաքեալ :

ՎԱՀԱՆ ՎՐ. ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

ԱԻՆՏԻՔ ԴՈՒԿԱՍԵԱՆԻ Ժառանգորդներէն ոմանք ռուս զատարաններու զիմեր են , ոչնչացնելու համար կտակին այն մասը որով մէկուկէս միլիոն ըուպլիի չափ գումար մը յատկացուած է , Թուրքիոյ մէջ համալսարան մը հաստատելու համար : Էջ-

միածնէն գրուած ըլլալով Պատրիարքարանի որ փոխանորդ մը կարգուի զատավարութեան մասնակցելու համար , Տեղապահ Ս.ը ուրբաթ օր խորհրդակցեցաւ Քաղաք. Ժողովին հետ , որ ընդունեց Կաթող. Տեղակալ Սուրէնեանց Արքեպսի առաջարկը , եւ ըստ այնմ որոշեց փոխանորդադիր զրկել Տեղակալին կողմէ նոյն դատին պաշտպանութեան կոչուած անձին :

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսը ծանուցած էր թէ Հալէպի նահանգին արկածելոց համար որչափ որ Խորհրդարանին կողմէ 1326ի պիւտճէին մէջ 6200 օսմ. ոսկի նպաստ քուէարկուած է , բայց այդ գումարէն ցարդ 2000 ոսկի միայն բաշխուած է , եւ անօթի այրիներ ամէն օր դիմում կ'ընեն : Խառն ժողովը անցեալ Դէի յիսուսին մէջ որոշեց խնդիրը քազրիւով մը Բ. Դրան ներկայացնել , եւ խնդրել որ հրաման տրուի կուսակալին , որպէս զի մնացեալ գումարը յատկացուի նպատակին :

ԷԶՄԻԱՄՆԻ Սինօգր բոլոր հոգեւոր ատենաներուն չրջաբերական մը զրկած է , ծանուցանելով որ Սինօգն արգիլած է Հայ Եկեղեցւոյ ծէսով պսակել այլադաւան քրիստոնեաները , իսկ եթէ պսակուողներէն մէկը հայ է եւ միւսը այլադաւան՝ (բայց ոչ Օրթոտոքս) , Հայ քահանաները կարող են այնպիսիները պսակել իրենց գրաւոր խնդրանքին համեմատ :

ՀԱՃԸՆԻ ազգայինները եպիսկոպոսական վկայական տուած են Առաջնորդ Տ. Պետրոս Վ. Սարաճեանի :

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ.—Տեղապահ Ս.ը գաւառներու բոլոր հոգեւոր պետերուն չրջաբերականներ ուղղած է , որպէս զի Առաջնորդներ , Տեղապահներ եւ Փոխանորդներ՝ իրենց տեղւոյն մէջ եւ մօտակայ տեղեր գտնուած հայ զինուորները Զատկական տօնին առթիւ խոստովանցնելով հաղորդեն , եւ անոնց վիճակին նկատմամբ տեղեկութիւն տան Պատրիարքարանի :


Մայրաքաղաքիս հայ-ոստիկան զինուորները գրով մը դիմած են Պատրիարքարան , խնդրելով որ միջամտութիւն ըլլայ Զատկի առթիւ արձակուրդ տրուելու իրենց :

ԱՒԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Աւագ չաբաթը, Դրիստոսի փրկարար տնօրինութեանց նուիրումած այդ սուրբ օրերը, որքան խորունկ ազդեցութիւն մը կոչուած են ընել ճշմարիտ հաւատացեալին վրայ, նոյնքան սրտազգեցիկ են մեր երանաշնորհ Նախնեաց գոհար շարականները, եւ անոնց յուզիչ եղանակները, որոնց արեւելեան միջանոյշ ներգաշնակութեան վրայ հիացում յայտնած են օտար նշանաւոր երգահաններ անգամ: Մասնաւոր հաճոյքով կը հրատարակենք Աւագ Հինգչաբթի օրուան սմէնէն ժողովրդական շարականը, Այսօր կանգնեցաւ. եւ Լացի գիշերուան խորազգեցիկ Տէր յերկնիցը՝ Ով սեանցելի. եւրօպական ձայնազրուեամբ(1), զոր կը պորտինք ազնիւ հաճոյակատարութիւնը Կոհակի խմբագրապետ Տիար Հմայեակ Արամեանցի, որ այս շարականներն յառկապէս ձայնագրել տուած է իր հրատարակած «Հայուն Երգարանը»ին մէջ գրուելու համար:

(1) Հրատարակուած երկու կտորներուն մէջ ալ ընդօրինակութեան միջոցին զրչի պզտիկ վրիպակներ սպրդած են, զորս շարականագէտ ընթերցողը ապահովաբար շատ դիւրաւ պիտի կրնայ ուղղել:

Շարական մեծիկէն կը աւար



Գ Ր Ա Ր Ա Ր

Այսօր կանգնեցաւ աւագան մկրտութեան, ի թողութիւն մեղաց մերոց:

Այսօր Տէրն մեր լուսնայր զոտս աշակերտացն, եւ պատուիրէր զայս ասելով:

Մի ոմն ի ձէնջ, եղբարք, մատնելոց է զիս ի մահ, եւ որոշի յաշակերտացդ:

Չայն լուեալ Պետրոսի, ակնարկէր առ Յովհաննէս, հարցանել թէ ո՞վ իցէ:

Բանն զոր ասաց Յիսուս, տրտմեցոյց զիւր զաշակերտսն, եւ խռովեցան ամենեւեբեան:

ԹԱՐԳՄ. ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

Այսօր բարձրացաւ մկրտութեան աւագան, մեր մեղքեշուն թողութեան համար:

Այսօր մեր Տէրը կը լուար աշակերտներուն ոտքերը, ու կը պատուիրէր ըսելով:

Ձեզմէ մէկը, եղբայրս, մահուան պիտի մատնէ զիս, եւ պիտի զօտուի աշակերտներէն:

Պետրոս այս լսելով աչք կ'ընէր Յովհաննէսի, հարցնելու թէ ո՞վ է արդեօք:

Յիսուսի ըսած խօսքը տրտմեցուց իր աշակերտները, եւ ամենքն ալ վրդովբուեցան:

Պ Ս Ա Կ Ն Ա Հ Ա՝ Ք Ե՛ Զ...

«Ուստի բուրբելով խնկոց անուշահոտութիւն»:

ՇԱՐԱԿԱՆ



դիւսներէն վեր հանուած այն փայտն անարգ,
իր հետ բերաւ յաղթանակաց շրթի՛ղ շարք...

Քառաթեւն սուրբ, սեղանը մե՛ծ քառութեան,
Օծուա՛ծ սրբուա՛ծ արեան շիթով աստուածեան:

Աղբիւսներէն դուրս բերուած խաչն փրկչին մեր,
Մարդոց քով նախ նախատինքի գործիք մ'էր,
Անո՛վ եղաւ քիչ վերջ նըշան պարծանքի,
«Ու շողշողաց գըմբէթներու վրայ ոսկի»:

Աղբիւսներէն վերցուած խաչն խնկաբոյր,
Ձոր տնկեց... ո՛հ, Յուդայի լի՛րբ մէկ համբոյր,
Յետոյ խրէց, սակայն, բիւր բիւր համբոյրներ,
Ձորս ներշնչողն հաւտացեալին վա՛ռ սէրն էր:

Աղբիւսներէն վեր բերուած խաչն՝ նիշ հըզօր,
Հետը բերաւ տառապանաց շղթայ մ'որ,
Իբրեւ մանեակ ոսկեճամուկ վառ ի վառ,
Ա՛խ, ձրգուեցաւ, դժբախտ Հայուն վիզէն վար:

Հայն հեկեկաց. խի՛ստ ծանրատա՛ր է, ո՛հ, Տէ՛ր, Տէ՛ր,
Կեանք-խնճոյքէն զի՞ անմասն, է՞ր մենք անտէր...
Մի՛թէ կրնա՛նք ժուժել այսքա՛ն վիշտերու,
Եւ այն, եթէ ըլլաս մենէ դուն հեռո՛ւ:

Աղբիւսներէն գտնուած այն սո՛ւրբ խաչին,
Ձոհը դիտե՛ց, արի՛ւն վաթեւն Հայ Քաջին,
Որ կ'իյնար սոսկ սիրոյն համար փրկչին հե՛զ,
«Առ, Հայո՛րդի, ըսաւ, պըսակն ահա՛ քե՛զ...»:

Ս. ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Մարաշ

«ՏԱՃԱՐ» ԻՆ ՆԵՐԿԱՅ ԹԻՒՐ

Տաճարի ներկայ թիւը, նուիրուած Աւագ Շաբթուան նուիրական խորհուրդներուն, եւ կիլիկիոյ նահատակութեան սգալից տարեդարձին, կը հըրատարակուի կրկին ծաւալով, երեսուն երկու էջ, միացուելով երկու շաբթուան թիւերը: Յառաջիկայ թիւը՝ որ կը հրատարակուի Ապրիլ 16ի շաբաթ օրը, Քրիստոսի Ս. Յարութեան վրայ Տ. Բաբգէն Ս. Եպիսկ. Ի հոգեշահ գրութենէն զատ պիտի պարունակէ նաեւ ուշագրաւ յօդուած մը Դաւրէժէն՝ ՎՍԵՄ. ԽԱՉԻԿ ԽԱՆ ՍԱՐԱՃԷ, Հայ Կիւն Ե. եւ Խ. դաւերուն, բանասիրական ու լեզուական հմուտ տեսութիւններով լեցուն, նաեւ ուրիշ այժմէական ուշագրաւ յօդուածներ:

ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Գ.

ՏԻԵԶԵՐԻՔԻ ՆԵՐՎԱՇՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Իմացուն և բանաւոր Աղբիւրէ տըր-
ուած ըլլալով մեզ կեանքը, պատճառ-
ներու և արդիւնքներու շղթայումը զմեզ
կը տանի, անոր ծագումը բացատրելու
համար, մինչեւ այն Աղբիւրը, ուրկէ կը
բղխի ան: Մարդիկ իրենց աղքատ և ան-
բաւական լեզուով Աստուած կը կոչեն
այդ աղբիւրը:

Աստուած այն կեդրոնն է, ուրկէ կ'ել-
լեն և ուր կուգան յանգիլ տիեզերքի բո-
լոր ուժերը:

Վառարանն է Ան՝ ուրկէ կը ծառա-
գայի արդարութեան, համերաշխու-
թեան և սիրոյ ամէն գաղափար:

Հասարակաց նպատակը, առ որ կը
քալեն բոլոր էակներ՝ գիտակցօրէն կամ
անգիտակցօրէն:

Աշխարհներու մեծ ճարտարապետին
հետ մեր ունեցած յարաբերութիւններէն
է որ կը բղխին տիեզերական ներդաշնա-
կութիւնը, միաբանութիւնը, եղբայրու-
թիւնը:

Եղբայրներ ըլլալու համար, իրապէս
պէտք է ունենալ հասարակաց Հայր մը,
ու այդ հայրը միայն Աստուած կրնայ
ըլլալ:

Պիտի ըսուի թէ Աստուած՝ աղանդա-
ւոր մարդոց կողմէ այնքան տարօրինակ,
երբեմն այնքան դժպէսի կերպարանքներու
տակ ներկայացուած է որ արդի միտքն
երես դարձուցած է անկէ: Պնդել թէ
Աստուած կրնայ պղտիկնալ մարդոց խօս-
քերով, համարժէք է ըսելու թէ Ալպ-
եան լեռը կամ Հիմալայան կրնան պըղ-
ծուիլ ծանծի մը շունչով:

Ճշմարտութիւնը լուսաճաճանչ, ակ-
նախտիղ, աստուածաբանական մթութիւն-
ներէ շատ վեր կը սաւառնի:

Ընդհամարելու համար սոյն ճշմար-
տութիւնը, միտքը պարտի ձերբազատ-
ուիլ անձուկ պատուիրաններէ, ռամիկ
գործքերէ, պարտի մէկ կողմ թողուլ կոշտ

ձեւերը, որոնցմով կարգ մը կրօնքներ
ծածկած են գերագոյն իտէալը: Ան պար-
տի ուսումնասիրել Աստուածը, իր գոր-
ծերուն մեծվայելչութեանը մէջ:

Այն ժամուն, ուր ամէն ինչ կը հանգ-
չի մեր ոստաններուն մէջ, երբ թափան-
ցիկ գիշերուան մէջ՝ լռութիւնը կը տիրէ
մրափող երկրի վրայ, այն ատեն, ո՛վ մարդ,
եղբայրս, վերցուր աչքերդ և դիտէ՛ եր-
կընքի անհունութիւնը:

Դիտէ՛ աստղերու կշռուած ընթացքը,
որ կը շարժին խորութիւններու մէջ: Այն
անհամար ջահերն աշխարհներ են, որոնց
քով երկիրը հիւլէ մ'է սոսկ, հրաշալի ա-
րեւներ՝ գորս կը շրջապատեն գունդերու
թափօրներ, և որոնց արագ ընթացքը՝
ամէն մէկ վայրկեանի մէջ՝ միլիոնաւոր
մղոններով կարելի է չափել:

Զարհուրելի հեռաւորութիւններ մեզ
կը բաժնեն անոնցմէ: Այս պատճառաւ է
որ անոնք իբրեւ պարզ լուսակէտեր կ'ե-
րեւին մեզի: Սակայն դէպի անոնց ուղղէ՛
գիտութեան սա հսկայական աչքը, --
հեռագիտակը:

Պիտի որոշես անոնց մակերեսները՝ ո-
րոնք կը նմանին բոցավառ ովկէաններու:

Ի զո՛ւր պիտի ջանաս համբել, կը բազ-
մանան անոնք մինչեւ ամենահեռաւոր ան-
ջրպետներու մէջ: Կը շփոթուին հեռաւո-
րութեան մէջ, լուսեղէն փոշիի պէտ: Տե՛ս,
երկրի մերձակայ աշխարհներուն վրայ
եւս կը գծուին ձորերն ու լեռները, կը
փոսանան ծովերը. կը շարժին ամպերը:

Ստուգէ՛ թէ կեանքի շարժումը կ'ար-
տագրուի ամէն տեղ, թէ հիասքանչ կարգ
ու սարք մը միօրինակ օրէնքներու տակ
կը միացնէ երկիրն ու իր քոյրերը, մոլո-
րակները, մէ՛կ ճակատագրով, որոնք կը
յաժին անհունութեան մէջ: Գիտցիր թէ
բոլոր այդ աշխարհները, մարդկային ու-
րիշ ընկերութիւններէ բնակուած, կը շար-
ժին, կը հեռանան իրարմէ, կը մօտենան
իրարու, կը շարժին զանազան արագու-
թիւններով, անցնելով անհուն ոլորտներ:
Գիտցիր թէ ամէն տեղ, շարժումը, գոր-
ծունէութիւնը և կեանքը ի հանդէս կու

գան Տակապապանծ տեսարանով մը :

Դիտե՛ սա մեր երկրագունտը, մեր մայրը, որ կարծես մեզ կ'ըսէ. «Ձեր միտն իմս է, դուք իմ գաւակներս էք:» Դիտե՛ զայն, մարդկութեան այդ մեծ ստնտուն, տե՛ս իր շրջավայրերուն, ցամաքներուն ներդաշնակութիւնը, որոնց ծոցին մէջ ազգերը ծլած ու մեծցած են, տե՛ս իր լայնատարած ովկէանները՝ յարաշարժ : Հետեւէ՛ եղանակներու վերանորոգմանը, որ զայն հետզհետէ կը հագուեցնէ կանաչ պծնանքով մը և կամ խարտիշուկ հունձքերով: Դիտե՛ բոյսերն ու կենդանի էակները, որոնք կը լեցնեն երկիրը, — թռչուններ, միջատներ, տունկեր ու ծաղիկներ: Այս բաներէն իւրաքանչիւրը հըրաշագեղ քանդակ մըն է, գոհար մը աստուածային տուփէն:

Դիտե՛ ինքզինքդ ալ, տե՛ս գործարաններուդ հիանալիօրէն բանիլը, զդայաւրանքներուդ խառնամասն և հրաշալի մեքենականութիւնը: Մարդկային ո՞ր հանձարը պիտի կրնայ նմանը շինել սա նըրբակազմ գլուխ-գործոցներուն — աչքին և ականջին:

Քննե՛ բոլոր այս բաները, ու հարցո՛ւր բանականութեանդ, գատողութեանդ թէ այսքան գեղեցկութիւն, չքեղութիւն, ներդաշնակութիւն կրնան առաջ գալ դիպուածէն, մանաւանդ թէ իմացական պատճառ մը չէ՞ որ կ'իջիւի աշխարհի կարգ ու սարքին և կը վարէ կեանքի բարեւըրջումը :

Ու եթէ առարկես ինծի այն պատուհանները, աղէտները և ամէն ինչ որ կու գայ խանգարել սոյն հիանալի կարգաւորութիւնը, ես քեզ պիտի պատասխանեմ. «Հետազօտէ բնութեան իընդիրները, մի՛ կենար մակերեսին վրայ, իջիր իրերու խորքը, ու զարմացմամբ պիտի տեսնես թէ այն առերեւոյթ հակասութիւնները մի՛ միայն կը հաստատեն ընդհանուր ներդաշնակութիւնը, և կը նպաստեն էականութեամբ յաւաքդիմութեան, ինչ որ կեանքի միակ նպատակն է :

— Եթէ Աստուած ստեղծեց աշխարհը,

կը պատասխանեն յաղթականօրէն կարգ մը նիւթապաշտներ, ո՞վ ուրեմն ստեղծեց Աստուածը : Սոյն առարկութիւնը անիմաստ է: Աստուած արարածներու շարքին վրայ յաւելուածական արարած մը չէ:

Տիեզերական էակն է Ան, անսահման՝ ժամանակին և միջոցին մէջ, հետեւաբար անհուն և յաւիտենական: Ձի կրնար ըլլալ էակ մը, ո՛չ անկէ վեր, և ոչ ալ անոր հաւասար: Աստուած է աղբիւրն ու սկիզբը ամէն կեանքի: Անով է որ կը զօգուին, կը միանան, կը դաշնաւորուին անհատական ամէն ոյժեր, որոնք առանց Անոր պիտի անջատուէին և պիտի ասարամիտէին: Եթէ երբեք իրենց գլխուն մնային, եթէ օրէնք մը, վերին կամք մը չվարէր այդ ոյժերը, անոնք ուրիշ ոչինչ պիտի արտադրէին, եթէ ոչ խառնաշփոթութիւն և քաոս: Գոյութիւնը ընդհանուր յատակագծի մը, մէ՛կ նպատակի մը, որոնց հաղորդ են տիեզերքի բոլոր ուժերը, կ'ապացուցանեն գոյութիւնը Պատճառի մը, գերագոյն խաղաղութեան մը, որ է Աստուած :

Թարգմ. ԱՐԱՄ ՀՈՒԱՍԱՐԵԱՆ

Լեոն Տրնի

ՀՈԳԻՒՍ ՀԱՌԱՉԱՆՔԸ

Կը սարսուռ մ'ամբողջ մարմնովս, Աստուած իմ, ջիղերուս մէջ կը զգամ սարսափը Մեծիդ: Միտքս՝ ովկէաններու անհղամուռնչ կոհակներուն առջիւ քայքայուած, խորտակուած՝ հաւակի մը բեկորներուն պէս, անդունդէ անդունդ կը թաւալի: Սիրտս՝ հրաբխային խառնարան մըն է, ուրկէ կը ժայթքին շամբուշ կիրքերուս ծուխն ու մռխն, բոցն ու կրակ, եւ կը սեւցնեն, կը մրոտեն ձիւնափայլ հոգիս աստուածածին, կ'այրեն, կ'այրեն շունչս երկնապարգեւ: Հոգիս՝ մեղքերուս խայթումներուն տակ վիթխարի՝ կը խըշխշայ . . . կ'արիւնի՝ . . . : Սեւ օձ մըն է փաթթուած էութեանս ու կը կրծէ՝ կը կծէ՝, կ'սւտէ . . . զիս: Խաւարն ալ

իր զահանգիչ մոլթ ձեռքը կը սարածէ վրաս, սոսկումի ունեւնեւրով: Եւ կը գալարուի՛մ, կը սողամ ոտքերուդ տակ, զաղփաղփուն Եսա Նչտելով առջիդ՝ ջղաձգային պայքարումներով, հոգեւարքի հռնդիւններով, կը մեռնի՛մ . . . կը մեռնի՛մ . . . կը մեռնի՛մ . . . Ու, երբ կ'ուզեմ աղերսի ու պաղատանքի նայուածք մ'ուղղել քեզի, կը փակուին աչքերս նայուածքիդ ցաւապնութենէն. երբ կը տարածեմ աշխարհասիրութենէ յոգնած թեւերս՝ գթութեան շող մը, ճառագայթ մուրալու, կ'իյնայն անոնք իսկ յն՝ վըշտաբոյր գէմքէդ յաղթանար: Երբ, հազիւ կարեկցութեան խնդրանք մ'ընելու համար, կը բռնամ խաբկատիր շրթունքս՝ կը շանթահարուիմ քու վարդակարմիր ճակատէդ, որուն շուրջ բոլորուած սրափուշերը կուգան կը մանկն ոսկորներուս ծուծերուն մէջ՝ աւելցնելով, բազմապատկելով կոստանքները հոգիիս: Կը բաղձամ կողէդ քաղել բալասանը վէրքերուս, — ումպ մը արիւն՝ փեռեկտուած ռգիիս, պտիկ մը ջուր՝ մեղսամորմոք ի տանքիս, մատիկ մը չիճուկ՝ մահամերձիկ կեանքիս, եւ չեմ կրնար . . . չեմ կրնար, ո՛հ, չեմ կրնար . . .

Կ'ընկճուիմ, կ'ու ժախտփիմ, կ'ուշաթափի՛մ: Ապերախսութիւններուս վերջիշումը, ուխտազանցութիւններուս յիշատակը, ուճիրներուս ծանրութիւնը գետնին կը գամեն զիս: Ու, դալարուելով ինչիդ պատուանդանին տակ, օրհասականի հատկընեալ աւաչներս կը կափկափեմ երերուն ու կերկերուն: Ուշ եւ ուժ ներծորէ՛ կենսաւէդ երակներուդ մէջէն՝ մահատրոփ երակներուս: Երբ ու լոյս անձրեւէ՛ վհատ, ու յուսահատ սրտիս, չաղ ու չող ճառագայթէ՛ ոսկի բիբերէդ՝ նուա՛ղ ու մեղսաբիբ աչքերուս, բոց ու կայծ արեւէ՛ չափիւղայ ճակտէդ՝ խաւարակուռ միտքիս, խաղաղութիւն գեփիւռէ՛ շունչէդ՝ մեղսակոծ հոգիիս:

Դո՛ւն, ով անյոյսին՝ յոյս, անյոյսին՝ լոյս, Յիսուս, որ քու խաչափայտիդ վրայէն իսկ մխիթարութեան ծիածանը կամարեցիր ոճրագործին հոգւոյն վերեւ՝

երբ ան կը պաղատէր «Յիշէ՛ զիս», դո՛ւն, ով քաւութեան նոխազ, որ քու հաւի ու մահուան ճգնաժամերուդ մէջ անգամ փրկարար ակնարկդ ծաղկեցուցիր զքեզ ուշացող Պետրոսին վրայ, ինձ ալ, ինձ ալ, Տէ՛ր, ժպտէ՛ ինչիդ վրայէն: Դո՛ւն, ով հոգիներուն տեսուչն ու անձնդիր հովիւր, զիս ալ առ քու ուսերուդ վրայ, որպէս մոլորած ոչխար, եւ թող բարձունքին մէջ յնծան բերկրապատար՝ զուարթունքները բիւրաւոր, որոնք ակնկառոյց կը սպասեն հոգիներու փրկութեան: Դո՛ւն, ով կորսուածները հետապնդող Նազովրեցի, ահա՛ ոտքերուդ տակ, տիղմերուն մէջ է կորսուած դրամը եղծուած, անւնանաչ. մայրօրէն գորովէ՛ ու վերցո՛ր զայն, նորոգէ՛ ու դարձեալ դրոշմէ՛ անոր վրայ պատկերդ ու կնիքդ աստուածային: **ԼՈՒՍՆԹԱԳ**

Սերաւսիս

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԻԼԻԿԻՈՅ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ազատագրեալ Թուրքիոյ պատմութեան ամէնէն տխուր էջը կը կազմէ մարտ 31ի հակասահմանադրական շարժումին հետ՝ Կիլիկիոյ 20000 անմեղներու նահատակութիւնը, որ փեռեկտեց ամէն Հայու սիրտ, վհատութեան մասնելով ամէնէն հզօր հաւատքով ներշնչուած հոգիներն անգամ: Այդ նահատակութեան տխուր տարեկիցին առթիւ, հոգեհանգստեան սրտայոյզ արարողութիւն կաարուեցաւ կիրակի օրը, 3 Ապրիլ, Մայր Եկեղեցւոյն մէջ, կը նախագահէր Տեղապահ Սրբազանը, եւ ներկայ հաւատացեալները խորունկ զգածմամբ եւ վշտահար սրտով կ'ունկնդրէին այդ հոգիւոր ցնցող պաշտամունքին: Հոգեհանգստեան պաշտօններ կատարուեցան նաեւ մայրաքաղաքիս ուրիշ եկեղեցիներուն մէջ ալ, եւ Տեղապահ Սրբազանն եւ քարոզիչներ յուզեալ բայց սրտապլուն դող խօսքերով սփոփեցին, մխիթարեցին

հաւատացեալ սրտաբեկ ժողովուրդը :

Այս տխուր տարելիցին առթիւ, Բերայի Հայ-բողոքականաց եկեղեցւոյն երէց Վեր. Արսէն Պ. Շմաւոնեան զրկած է մեզ յուզիչ բայց միեւնոյն ատեն ոգեւորող յօդուած մը, նահասակներու Ազգը՝ որ կ'եւրեւայ Տաճարի ներկայ թիւին մէջ, նոյնպէս ներկայ թիւին մէջ, ընթերցողներն հրատարակուած կը տեսնեն նահասակներու յիշատակին նուիրուած սրտագրաւ նկարագրութիւն մը, Ամանոսի (Հայ Լեւ) լեռնաշղթաներու լանջքին վրայ՝ քանդուած զիւղակի մը հրկիզուած եկեղեցիի աւերակոյտին մէջ կատարուած Արեւազալի հողեյոյզ արարողութեան : Թողուածն ըստորագրած է Տաճարի քաղցրախօս աշխատակիցը՝ Սսական Վարդապետ, (այժմ Տ. Ներսէս Եպիսկ. Դանիէլեան, ինչպէս կը տեսնուի քիչ մը վարը հրատարակուած տեղեկութիւնէն) :

ԿԻՒԼԻԻՈՅ ՆՈՐԱՊԱՍԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՆԸ

Գողանէն (Սիւ) Տաճարի խմբագիր-տընորէնին հասցէին ուղղուած է հետեւեալ հեռագիրը՝ Մարտ 28 թուականով. —

Ներսէս վէ Խորէն բահիպլէր, վէ Հրանդ բահիպ տէ Եղիշէ թէսմիյէ օլունարադ տիւն էբիսկօբօս թաղտիո օլունարլար :

ԿԱՐԱՊԵՏ ԲԱԲԱՍ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

Այս հեռագրէն կը հասկցուի թէ՛ ըստ կանխագոյն որոշման՝ Ն. Ս. Օծութիւն Կիւիկիոյ Վեհաշնորհ Տ. Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը Ս. Լուսաւորչի Մուտն ի վիրապն տօնին յաջորդող կիրակի օրը Եպիսկոպոս ձեռնադրած է Ատանայի Առաջնորդ Տ. Ներսէս Ծ. Վ. Դանիէլեանը, Եօզկատի առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վ. Դիմաքսեանը, եւ Տ. Հրանդ Ծ. Վ. Կարոյեանը՝ Կաթող. փոխանորդ Սոյ : Մինչեւ այդ սողերը գրուիլը, ո եւ է հեռագիր չէր հասած Ազգ. Պատրիարքարան, (ինչպէս ուրիշ թերթերու ալ) : Ապահովաբար Կիւիկիոյ Ս. Կաթողիկոսը մասնաւոր նամակով, առ

ի տեղեկութիւն, փութացած պիտի ըլլայ Պատրիարքարանի իմացնել Եպիսկոպոսական այս ձեռնադրութիւնը, զոր կատարած է թեմական ստիպողական եւ անհրաժեշտ պէտքերու գոհացում տրուելու համար :

Նորապսակ Տ. Ներսէս Եպիսկ. Դանիէլեան քաջածանօթ է Տաճարի ընթերցողներուն, երեք չորս շաբաթ առաջ քանի մը սողով տուած ըլլալով արդէն այնոր կեանքի գլխաւոր գիծերը, եւ իր փափուկ զրչին արդիւնքներն ալ առիթ ունենալով յաճախ ներկայացնելու ընթերցողին : Տ. Խորէն Եպիսկ. Դիմաքսեան, արժանաւոր կերպով կը վարէ Եօզկատի առաջնորդութիւնը : Իսկ Տ. Եղիշէ Եպիսկ. Կարոյեան, Կաթող. փոխանորդ Սոյ, ճանչցուած է իբր կարող գրող մը եւ գործունեայ եկեղեցական մը :

Մեր ջերմ շնորհաւորութիւններն եւ սրտաբուխ մաղթանքները նորապսակ Ս. Եպիսկոպոսներուն, որոնց անձնուէր ու գիտակից գործունէութեան պէտք ունի Կիւիկիոյ հարուածեալ ժողովուրդը :

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ, անցեալ Դչ.ի նիստին մէջ Պալաթի առժամեայ քարոզիչ կարգեց Տ.Դրիգորիս Ծ.Վ.Պալապեանը :— Տ. Հմայեակ քհ. Էքսէրճեանի ղիտողագրին վրայ, Տ. Գնէլ Ծ. Վ. Դալմբեարեանէ, եւ Տ. Տաճատ եւ Տ. Արիստակէս քհ.ներէն յանձնախումբ մը կազմեց, ընենելու համար Տ. Մուշեղ Եպս.ի կրօնի եւ պատմութեան դասագիրքերը :— Անպայման փիլոնաղրութեան դատապարտեց Սինօպի Կէօլտաղ գիւղի Տ. Վրթանէս քահանան, որ անբարոյական ընթացքի մէջ գտնուած էր :— Որոշեց գրել Գասթէմուռնիի առաջնորդաբանին, որպէս զի օրինական միջամտութեամբ տնտուի Գոյլուճի կարգազուրկ Տ. Աթանագրիսէ քհ.յի սքեմը, որով գեռ կը պատէր :

* Պեթիկքաթի քահանայութեան եւ թաղականութեան յայտնած փափաքին վրայ, Կեզր. Կրօն. Ժողովը գնահատելով թաղին Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ 40

տարիէ ի վեր պաշտօնավարող Արժ. Տ. Սահակ քահանայ Պետրոսեանի բարեւոք ծառայութիւնն ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյն եւ անոր խոհական գործունէութիւնը, նոյն Եկեղեցւոյն աւագերիցութեան կոչած է զինքը, Աւագութեան տիտղոսն եւս տրուելով իրեն, Կը շնորհաւորենք Ն. Արժանապատուութիւնը, մաղթելով կար եւ կարողութիւն :

ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.— Օրթաքէօյի վիճակով դադարեալ երկու երեսփոխանաց նոր ընտրութիւնը կատարուելով նախորդ կիրակին, վերընտրուեցան նախորդ երեսփոխանները՝ տեարք Տօքթ. Թէրզեան եւ Խաչիկ Սվաճեան: Նոյնպէս վերընտրուած է Եգիպտոսէն Վահան Էֆ. Թէքէեան: Կարինէն եւ Երեսփոխան ընտրուած է Սողոմոն Էֆ. Տ. Ազարեան:

ԿՐԹԱԿԱՆ ԶԱՐԾԻՆ ասթիւ տէրութեան եւ ազգին միջեւ առկա մնացած խնդիրը կարգադրութեան ճամբուն մէջ մտած է: Դատական նախարարն Բշ. օր պաշտօնադրով մը հաղորդած է Տեղապահ Ս. Հօր՝ Ազգ. Կեդր. Վարժարանին վաւերացումը, իբրեւ իճասի վարժարան, Պատրիարքարանի իրաւասութեան ներքեւ: Հաստատուած են ուսուցիչներու վկայականները եւ անոնց դասախօսած առարկաները. հետեւապէս թէ՛ ուսուցիչները եւ թէ՛ ուսանողները զերծ պիտի մնան զինուորական ծառայութենէ: Կը յուսացուի որ հետզհետէ վաւերացուին թաղային վարժարաններն ալ, իբրեւ Պատրիարքարանի իրաւասութեան տակ զտնուող հաստատութիւն, առանց ո եւ է պատասխանատու տեսուչ փնտռելու. եւ երբայդ վարժարաններու ուսուցչաց վկայականներն ալ հաստատուին, զերծ պիտի մնան զինուորագրութենէ: Պատրիարքարանի իրաւասութիւնն այս կերպով հաստատուելով, խնդիրը կրնայ կարգադրուիլ անյապաղ:

ԲԱՂԷՇԻ նորընտի բառաջնորդ Տ. Սուրէն Մ. Վ. Գալէմեան, Շք. օր մայրաքաղաքէս մեկնեցաւ իր պաշտօնատեղին, զրկուած ըլլալով իր ճամբու ծախքը:

ՏԵՐՈՒՆԻ

Յաւօք կը ծանուցանենք թէ Բերայի Աւագերէց Տ. Ներսէս քահանայ Նաղիկեան կնքեց իր մահկանացուն: 63 տարեկան էր: Դշ. մարտ 23 Անգլ. դեսպանատան զիմացը բարեկամի տունը ճաշելէ ետք կաթուածահար ինկաւ եւ զգայազիրկ փոխադրուեցաւ Ս. Յակոբ ուր աւանդեց իր հոգին: Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ չաքաթ առաւօտ, 26 մարտ, Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցւոյն մէջ, հանդիսագրութեամբ Տ. Հմայեակ Ս. Արքեպ. Դիմաքսեանի: Մեր վշտակցութիւնը՝ Բերայի Պատ. քահանայից դասուն եւ հանդուցելոյն պարագայից:

Խորին ցաւով կը ծանուցանենք մահը ԳՍՈՒՆԻԿ Էֆ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ, ծանօթ ազգային շրջանակի մէջ եւ առեւտր. հրապարակի վրայ, եւ ամէնուն սիրելի՝ իր ազնիւ զգացումներովն եւ ազգասիրութեամբը: Անգլ. հպատակ ըլլալուն, թէեւ մասնակցած չէ ազգային-վարչական գործերու, բայց մեծ օժանդակ մը եղած է Միացեալ ընկերութեան, բաւական ժամանակ վարելով նաեւ Տնօրէն Ժողովոյ ատենապետի պաշտօնը: 30 տարիի չափ առաջ, Տ. Ներսէս Արքեպ. Վարժապետեանի Պատրիարքութեան օրով, անդամակցած է Սովետոյ յանձնաժողովին, որ նախախնամական դեր կատարեց ժամանակին: Թերթիս Տնօրէն-խմբագիրը, առաջին անգամ ծանօթացաւ հանդուցելոյն՝ անցեալ տարի Տանարի խմբագրութիւնն իրեն յանձնուելու օրերուն, եւ հանդուցեալին սրտապնդող խօսքերն ու յորդորները՝ այսպիսի օգտաշատ հրատարակութեան մը ուժ տալու եւ ո եւ է խոչընդոտի առջեւ չվհատելու, մեծ քաջալեր մը եղան՝ ոտանձնելու այսպիսի ծանր ու զժուարին ձիւնարկի մը պատասխանատուութիւնը: Երկար տարիներ Պոլսոյ մէջ զբաղած է Մանթաշեան առեւտրական տան գործերով, եւ իրեն հետ մօտէն յարաբերութիւն ունեցողները ճանչցած են իբրեւ

տիպար մը ուղղամիտ, ազնիւ անձնաւորութեան : Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ անցեալ '72, օրը (մարտ 30) Գուրուշէշմէյի եկեղեցւոյն մէջ պատշաճ հանդիսութեամբ : Ի դիմաց Տեղապահ Ս. Հօր դասին մէջ սգակիր կեցած էր Տ. Սմբատ Ծ. Վ. Գազազեան :

Մեր վշտակցութիւնները հանգուցելոյն սգակիր ընտանեաց եւ պարագաներուն :

*. Ազն. Հայկ եֆ. Պօճաւարեան՝ հետեւեալցաւակցական ֆաւսթը դրկած է հանգուցելոյն ֆեոտրի Ազն. Տիրան եֆեմի Պապաեանի :

Ազնիւ եղբայրս,


Երկու ամիսէ ի վեր կրած յուզումներուն եւ ցաւերուն մէջ, ամենէն յուսահատական լիշեր մը անցուցի երէկ. աւելի յարգած եւ հիացումով մը պաշտած բարեկամիս՝ Յովակիմեան էֆ. ի մահը խորապէս յուզեց զիս : Մօրս մահունէն ի վեր՝ առաջին անգամն էր որ սիրելիի մը դառն կորուստը զգացի եւ արցունքով անցուցի գիշերս : Չեմ համարձակիր իւր ազնիւ տիկնոջ այս մեծ վշտին մէջ բառ մը գրել. խնդրեմ, հաղորդեցէք եղբօր մը արցունքով զգացած վշտակցութիւնս եւ զուք ալ ընդունեցէք վշտահար մասնակցութիւնս Ձեր մեծ սուգին :

Սգակիր քարեկանդ
ՀԱՅԿ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

23 Մարտ 1911

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Տաճարի թէ՛ արտասահմանի եւ թէ՛ Թուրքիոյ գաւառներու մեր գործակալներուն եւ բաժանորդներուն կը յանձնարարենք իրենց դրամական առաքումները կատարել մանսա-քօսի միջոցով միայն. ուրիշ ո եւ է միջոցաւ ղրկուած դրամներու գանձումը գրծուարութեանց եւ յապաղումներու առիթ կ'ըլլայ մեզի :



ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Ս. Է. ՋՄԻԱՇՆԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՊԵՏԵԸ. — Գրեց Իրիգորիս Ծ. Վ. Պալազեան. — Քննադատական գրուածք մը՝ Ս. Է. Ջ. Թաճարի միաբանութեան ներքին կեանքին վրայ, ամբողջացումը Սկիւտարի լսարանին մէջ ըրած յայտնութեանց : Կողքին վրայ իբր բնութան կ'երեւի հոգեւոյս Տ. Մատթէոս Ս. Կաթողիկոսի խօսքը. — «Այս տունը կը փանդուի կոր, Գեո'րգ սրբազան, պահէ՛ միմիջեւ յաջորդիս գալը» : 96 երես : Գին 5 դր. : Կեդրոնատեղի Սիւնեաց գրատուն, Պոլիս, Պագրըճըլար թիւ 11 :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ. — Բժշկապետ Ա. Բարսեան, անցեալ տարի հրատարակած «Եկեղեցական առողջապահութիւն» գործին առթիւ թերթերու մէջ եղած քննադատութեանց համար կատարած է մէկ քանի «Զրոյց»-ներ (causerie), զորս ամիսփած է մէկ հատորի մէջ : Իր շօշափած նիւթերուն կարեւորութեան պատճառով արժանի է ընդհանուր ուշադրութեան : Տպագր. Վաղարշապատ, Մայր Աթոռոյ տպարան, 1911 : Գին 40 կոպէկ :

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ, Եօքը ֆարգներ. — Գրեց Վեր. Ա. Պ. Շմառնեան, ամիսփելով հաւաստիքի թացատրութիւն անցեալ տարի տուած քարոզները : Հաւաքով եւ խորունկ համոզումով գըրուած գիրք մը. արժանի ամէն Բրիտանեայի յրասեղանին վրայ կարեւոր տեղ մը գրաւելու : Տպագրութիւն Մատթէոսեան, գին 5 դրու :

ՅԱԻԵԼՈՒԱԾ «Ամենուն Տարեցոյցը»-ին. — Թէ՛ Ո՛րիկի ծանօթ եւ այնքան ճոխ Տարեցոյցին արժանաւոր յաւելուած մը, ուր գրական սիրուն էջերու հետ կը խմացուի վերջացող տարւոյն ընթացիկ պատմութիւնը, ճշգրիտ ու խղճամիտ դասաւորումով մը : Բազմաթիւ պատկերներ 70 էջ : Գին 3 դր. : Գաւառները՝ Յու. կէս դրու :

Արտօնատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ
ՀԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԷՍԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ARMENIA

Ամերիկացի նշանաւոր գրագէտներու եւ գրագիտութիւններու աշխատակցութեամբ Ամերիկայի մէջ կանոնաւորաբար հրատարակուած գեղեցիկ պարբերական մը , որ կը պաշտպանէ նաեւ Հայոց շահերը՝ ծանօթացնելով Հայ ազգին գրականութիւնը եւ պատմութիւնը անգլիական ժողովրդին :

Armenia-ն կը պարունակէ այնպիսի գրական զմայելի էջեր , որոնք հաւասարապէս կը շահագրգռեն թէ՛ Հայ թէ՛ Ամերիկացի հասարակութիւնը :

Ահա՛ թէ ինչ կ'ըսէ Նիւ-Եորք էյմէրիքըն հանրածանօթ օրութեան թիւն գրական բաժնի խմբագրապետը .

—«Armenia-ն , որ Արեւելքի չափ պայծառ ու վճիռ գրականութիւն մը կը ցոլացնէ , կրնայ յաջողակօրէն բաղդատուիլ Ամերիկեան գրական Հանդէսներու հետ , պայմանաւ որ վերջիններէն պակսեցուի գիրենք նսեմացնող վաճառականական ոգին» :

Գօլէճներու եւ բարձրագոյն վարժարաններու մէջ անգլիներէն լեզուի դասընթացքին հետեւող բոլոր գրասէր ուսանողներու ջերմապէս կը յանձնարարուի այս հոյակապ պարբերականը , որուն տարեկան բաժնեգիրն է միայն մէկ տոլար Ամերիկայի , եւ տոլարուկէս Թուրքիոյ համար :

Դիմել՝ Editor of Armenia

P. O. Box. 201 Madison Square Station

New York City

Ապագիկ ապսպրանքներ նկատի չեն առնուիր :

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ

Չորս Աւետարաններուն պարունակութիւնը՝ ցարայտելով , եւ համաձայնելով եւ բացատրելով պատմութիւնը . — Պարզաբանեց՝ Մաղափա Արեւիսկոպոս Օրմանեան , (նախկին Պատրիարք) . — Հրատարակիչը Վ. եւ Հ. Տ. Ներսէսեան , Կ. Պոլիս , 1911: Դին 25 դր. լաթակազմ :

1100 ստուար էջերէ բաղկացեալ ընդարձակ հատորի մը մէջ նախկին Պատրիարք Ամեն. Տ. Մաղափա Ս. Արքեպ. Օրմանեան ամփոփած , դասաւորած եւ ամբողջացուցած է Լոյս կրօնաթերթին մէջ սկսուած եւ յետոյ Արեւելքի մէջ շարունակուած յօդուածներու շարքը : Հեղինակին պիտաւոր նպատակն եղած է , կերպով մը ժողովրդականացնել Աւետարանը , այսինքն հաւատացեալ ժողովրդեան կարողութեան , ձեռնհասութեան յարմարքնել : Հատորին մէջ կը պարգուին ոչ միայն պատմական , վարդապետական , դաւանական տեսութիւններ , այլեւ ժամանա-

կագրական , տեղագրական , հնախօսական , գրչապրական եւ լեզուաբանական տեղեկութիւններ : Անհրաժեշտ գիրք մը ամէն ճշմարիտ հաւատացեալի , մասնաւորապէս եկեղեցական պաշտօնէից , եւ մանաւանդ քահանայական դասու ստուար մեծամասնութեան , որ ատոր մէջ պիտի գտնէ Աւետարանները ամփոփող եւ յուսաբանող ամէն տեսակ տեղեկութիւններ՝ առանց այս ու այն կողմ թարթափելու : Հատորը ճոխացած է երկու բացատրական քարտէսներով (Պաղեստին եւ Երուսաղէմ) , եւ երեսունէ աւելի պատկերներով :

ՀՄԱՅՆՈՒ ԲԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՄԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. ՀԱՏՈՐ

Հարիւրին 40 գեղջ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ՓԱՓԱԶԵԱՆ ԴՐԱՏՈՒՆ

Սիւմպիլլիս Խան

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՀԱՅՈՒՆ ԵՐԳԱՐԱՆԸ.—Պատկերազարդ ձայնագրուած երգարան լիակատար: Կազմեց Հմայեակ Արամեանց: Կը պարունակէ թէ՛ այն հատընտիր երգերը որոնք երևցած են զայնազան երգարաններու մէջ, եւ թէ՛ կարգ մը բոլորովին անտիպ ընտիր երգեր: Կը հրատարակուի տետր առ տետր: Գին իւրաքանչիւր տետրին՝ 20 փարա:

ԿՈՀԱԿ

Պատկերազարդ քերթ

գրական, քաղաքական, սոցիալական, ընկերային
Յունվար 23ին վերականգնուած է հրատարակուիլ՝ խմբագրութեամբ Տիար Հմայեակ Արամեանցի, զարձեւոյ իջրեւ չաբաթաթերթ, նախկին ուղղութեամբ եւ չահեկան պարունակութեամբ: Հատը 10 փարա:

Հասցէ՝ Կոնստանտինոպոլիս, Սամաթիա:

ԵՓՐԱՏ.—Կիսամիսեայ հանդէս, Ազգային, գրական, գիտական եւ քաղաքական.— Հրատարակութիւն խմբագրութեան Եփրատ քօլէճի ուսուցչութեան, Գաւառաթերթերու մէջ կարեւոր դիրք մը ունի իր լուրջ պարունակութեամբ: Հրատարակուեցաւ Բ. տարւոյ թիւ 4ը (փետր. 28): Տարեկան բաժնեգին 20 ղշ. Արտասահման՝ 5 ֆր. կամ 1 տօլար: Հասցէ՝ խմբագրութեան, Եփրատ քօլէճ, Կարապետ Մ. Սողիկեան:

ԶԱՆԱԶԱՆ ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆՔ.— Սիրուած բանաստեղծ Մկրտիչ էֆ. Աճէմեան այս խորագրով հատորիկի մը մէջ ամփո-

փած է Եւրոպական նշանաւոր բանաստեղծներու քերթուածներէն ըրած թարգմանութիւնները, ինչպէս Վ. Հիւկոյէն, Առլէտէն, Սիւլլի Բրիտոմէն, Կ. Կուստանիօյիէն (իտալացի բանաստեղծ), Լաֆօնէնէն, Պէոանտէի երգեր, Էսայէն, Ասրուշան գեղեցիկ գրախօսականով մը կը բանայ հատորիկը, ուր կ'երեւան ինքնագիր քերթուածներ եւս: Տպագր. Շանք, Գին 5 ղշ.:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ, ամսաթերթ.— Հրատարակուեցաւ Բ. թիւը (Մարտ), ճոխ եւ չահեկան բովանդակութեամբ, եւ պատկերներով: Տարեկան բաժնեգին 20 ղշ. արտասահման 5 ֆր.: Ձեռքէ 2 ղշ.: Տպագր. Օ. Արզուման:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄԵԱՐՈՅԺ

(Վկայեալ Կայսերական բժշկական վարժարանէն եւ պատմական ասամբարոյժ կրօնէր պալայից վարժարանին)

Պեքիքաւ, Հայոց Եկեղեցիին ճիւղ դիմացը:

Կը դարձանէ ակոսայի եւ լինտերու ամէն տեսակ հիւանդութիւններ. կը շինէ բնականին յար եւ նման ակոսաներ փառջուի կամ ոսկի փափի վրայ: Չափէն աւելի փոած ակոսաները փռոցոնէ կ'ընէ. կը շինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ քոռարչեմէ:

Հիւանդ կ'ընդունի Դշ. եւ Ուր. օրերը առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր իրիկուն ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.): Ատկէ զուրա մասնաւոր ժամագրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի: